

## ԱՍՏԵԻ ԱՊՏՈՒԼԱԶԵԱՆ ԽՈՐՀՐԱԿՅԵՅԱՆ ԵՒ ԲՆՆԱՐԿԵՅԻՆ ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆԻ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ

Երկուշաբթի, 15 Յուլիս 2019-ին, Սուրիոյ Նախագահ Պաշար ալ Ասատ ընդունեց Իրանի Խորհրդարանի Նախագահի միջազգային հարցերու օգնական Յուսէյն Էմիր Ապտուլլահեանը: Հանդիպումին ընթացքին Ասատ շեշտեց Սուրիոյ Իրանին ցուցաբերած աջակցութիւնը՝ ԱՄՆ-ի որդեգրած ապօրինի որոշումներուն եւ սպառնալիքներուն դէմ:



Սուրիական Նախագահական կայքէն կ'իմանանք, որ Ապտուլլահեան ամբողջական գեկոյցով Նախագահ Ասատը տեղեակ պահեց Իրանի միջուկային թղթածրարին, ինչպէս նաեւ քաղաքական վերջին զարգացումներուն մասին: Կողմերը խորհրդակցեցան նաեւ Սուրիոյ պատերազմին առնչուող զարգացումներուն եւ տարածաշրջանի ապահովական իրավիճակին շուրջ:

Սուրիոյ արտաքին գործոց Նախարար Ուալիտ ալ Մուալլէմ եւս հանդիպում ունեցաւ Ապտուլլահեանի հետ: Անոնք խորհրդակցեցան տարածաշրջանի զարգացումներուն եւ երկու երկիրներուն միջեւ երկխօսութեան ու ծրագրերու համակարգումի անհրաժեշտութեան շուրջ:

Յիշենք, որ 2019-ի սկիզբէն, Դամասկոս այցելեցին իրանցի քաղաքական գործիչներ եւ երկու երկիրներուն միջեւ ստորագրուեցան զանազան համաձայնագրեր, որոնց Նապատակն էր զարգացնել Սուրիոյ եւ Իրանի տնտեսական գործակցութիւնը:

## ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՀՀ ՄԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՀԱՒԴԻ ԿԵՂՈՆ

Կազմակերպութեամբ ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոսութեան, Չորեքշաբթի, 10 Յուլիս 2019-ին, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան եւ Հալէպի առողջապահական եւ հասարակական հարցերու յանձնախումբի պատասխանատու Շէյխ Մուհամմետ Ատիպ Մահմուտ Հասսուն իրենց ընկերակցող պատուիրակութիւններուն հետ ՀՀ Հալէպ ժամանած մարդասիրական առաքելութեան խումբի կեդրոն այցելեցին:



Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Եպս. Չօպուեան ողջոյնի իր խօսքին մէջ անդրադարձաւ առաքելութեան կարեւորութեան ու պատմական նշանակութեան՝ շեշտելով, որ սա Սուրիոյ ժողովուրդին Նկատմամբ մեր սիրոյ եւ երախտագիտութեան արտայայտութիւնն է, այն շերտ վերաբերմունքին համար, զոր ցուցաբերած է սուրիացի բարեկամ ժողովուրդը Ցեղասպանութենէն մազապուրծ փրկուած հայ ժողովուրդի գաւակներուն Նկատկամբ:

Շէյխ Մուհամմետ Ատիպ Մահմուտ Հասսուն Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններուն եւ ժողովուրդին Սուրիական Արաբական Հանրապետութեան Մուֆթիի երախտագիտութիւնն ու շնորհակալական խօսքերը ուղղեց, շեշտելով, որ խումբին կողմէ մինչեւ օրս կատարուած մարդասիրական աշխատանքները թէ՛ առողջապահութեան, թէ՛ ականազերծման ոլորտներուն մէջ արժանացած են Սուրիոյ ժողովուրդին բարձր գնահատանքին:

## ԱՆԻ ՊԵՏԻԿԵԱՆ ՄԱՍ ԿԱԶՄԵՅՆ ԱՆԱՆԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵՒՈՒԹԵԱՆ ՂԱՍԻՆ



Հալէպի Նահանգային Խորհուրդի պետական պաշտօնէութեան դասէն ընտրուողներու ցուցակէն Ներկայացուցիչի մը մահուան պատճառով, համաձայն Նահանգային Խորհուրդի կանոնադրութեան, թափուր մնացած աթոռը զբաղեցուց վերջին ընտրուողին յաջորդող բարձրագոյն ձայնը ապահովածը, որ այս պարագային Բերիոյ Հայոց Թեմի թեկնածուներէն՝ Անի Պետիկեանն էր:

## ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. ՏԵՐ ՄԱՍԻՍ ՍՐԲ. ԵՊՍ. ԶՕԴՈՒԷԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՂԱՄԱՍԿՈՍ

Կիրակի, 14 Յուլիս 2019-ին, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը ժամանեցին Դամասկոս:

Պատուիրակութեան մաս կը կազմէին Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան ժիրայր Ռէիսեան, շրջանի Ազգ. Երսփիս. Ժող. Ներկայացուցիչ Կարօ Իւզպաշեան, Ազգ. Վրչ., Տնտեսական եւ Ոստմնական խորհուրդներու եւ ՍՕ Խաչի Ներկայացուցիչները: Սրբազան հայրը եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը մեծ խանդավառութեամբ ընդունուեցան Դամասկոսի ազգայիններուն, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխանին, բարեսիրական, մշակութային, մարզական եւ կրթական միութիւններու կողմէ:



Կերակցող պատուիրակութիւնը մեծ խանդավառութեամբ ընդունուեցան Դամասկոսի ազգայիններուն, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխանին, բարեսիրական, մշակութային, մարզական եւ կրթական միութիւններու կողմէ:

Շար.՝ Էջ 9 ➤

## ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՃԷԶԻՐԵԻ ՇՐՋԱՆ

Երկուշաբթի, 15 Յուլիսի առաւօտեան Գամիշլի ժամանեց Բերիոյ Հայոց Թեմի Նորընտիր առաջնորդն ու իրեն ընկերակցող պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէին Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան ժիրայր Ռէիսեան, թեմի Ազգ. Երսփիս. Ժող. Ներկայացուցիչ Կարօ Իւզպաշեան, Ազգա-



յին Վարչութեան, Տնտեսական եւ Ոստմնական խորհուրդներու Ներկայացուցիչներն ու ՍՕԽ-ի Շրջանային Վարչութեան ատենապետուհին: Սրբազան հայրն ու պատուիրակութիւնը դիմաւորուեցան Արժ. Տ. Պսակ Քինյ. Պերպերեանի եւ շրջանի ազգայիններուն կողմէ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 6:00-ին, սրբազան հայրը Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ իր անդրանիկ պատգամը ուղղեց ժողովուրդին՝ շեշտելով, որ

Բժշկի. Սարի Մելքոն  
 Շար.՝ Էջ 9 ➤

### Խմբագրական

### ԳՆԱՅԱՏԵԼՈՎ ՈՒՂՂԵԼ ՇՐՋԱՆԱԿԱՐՏ ՀՈՒՆՁՔԵՐԸ

Յուլիս ամիսը յատկանշուեցաւ սուրիահայ միջնակարգ եւ երկրորդական վարժարաններու շրջանաւարտ հունձքերուն ամաւերջի հանդէսներով:

Ուրախալի էր բեմերուն վրայ տեսնել ուսումնատենչ երիտասարդ-երիտասարդուհիներ, որոնք կեանքի նոր փուլ մը պիտի թեւակոխեն՝ իրենց նախասիրած ճիւղերուն մէջ մասնագիտանալով, իրենց տեսիլքին իրականացման առաջին քայլերը նետելով:

Յաջողակ երիտասարդը անպայման բարձր գնահատանիչ ապահովորդ չէ: Ան ձգտում ունեցողն ու այդ ձգտումին հասնելու, մասնագիտանալու համար պայքարող երիտասարդն է, որ կը հաւատայ իր ներքին ուժին, կարողութիւններուն:

Մեր շրջանաւարտները, փաստօրէն, վկայեցին որ չեն ընկրկիր դժուարութիւններու դիմաց: Պատերազմի դառն տարիները չխամրեցուցին անոնց ձգտումները: Անոնք մեծ յոյսերով աշխատեցան, սորվեցան, մաքառեցան, իրենց լաւագոյնը ի գործ դրին երկրորդականի վկայականը ստանալու ու բարձրագոյն ուսման ուղղուելու համար:

Անոնք քաջ գիտէին, որ 21-րդ դարը ճարտարագիտութեան դար է, մասնագիտացման դար է: Ըստայնմ տընեցան, սորվեցան:

Մեծ էր դերը հայկական վարժարաններուն, որոնք երկրի ընդհանուր պատկերին մէջ լաւագոյն վարժարաններ կը համարուին իրենց կրթադաստիարակչական ծրագիրներով, որքան ալ որ ներքին դժուարութիւններ եւ տարուէ-տարի նորարարութեանց ներմուծման կարիք ունենան:

Այս բոլորով հանդերձ, շրջանաւարտներու մեծամասնութեան մօտ կը շարունակուէր մասնագիտութեան ընտրութեան դժուարութիւն, որոշ համեմատութեան մը մօտ նաեւ անորոշութիւն, մասնագիտական նախասիրութեան եւ ընծայուած առիթներու անհամապատասխանութիւն: Հարցը որոշ չափով կը ծագի այն պատճառով, որ սուրիական կրթական համակարգին մէջ տակաւին կը գործէ պաքաւորիայի գնահատանիչին հիման վրայ համալսարանի որեւէ ճիւղ ընդունուելու պայմանը: Սա որոշ չափով կը սահմանափակէ շրջանաւարտներուն ընտրութիւնը, որովհետեւ քանի մը կիշ կորսնցուցած ըլլալով, որեւէ շրջանաւարտ կըրնայ առիթ չունենալ իր նախասիրած մասնագիտութիւնը ընտրելու: Սուրիոյ կրթութեան նախարարութիւնը այս հարցը կը փորձէ աստիճանաբար լուծել՝ որոշ համալսարաններու պարագային մուտքի քննութեան առիթներ ընծայելով ուսանողներուն, երկրորդական վարժարաններէն ներս գնահատանիչ չափանիշները վերատեսութեան ենթարկելով եւ այլն:

Այսուհանդերձ համալսարան ընդունուելու այս ձեւը պատճառ կը դառնայ, որ կարգ մը աշակերտներ ընտրեն կարելին, ոչ թէ փափաքելին: Հարցին մէկայլ երեսը այն է նաեւ, որ երկրորդականի շրջանաւարտները լաւապէս ծանօթացած չեն ըլլար Սուրիոյ համալսարաններու տարբեր ճիւղերուն, անոնց նիւթերուն, տուեալ համալսարանը աւարտելէն ետք աշխատանքի հաւանական ասպարէզներուն: Որոշ շրջանաւարտներ պատկերացում ալ չեն ունենար, թէ բարձրագոյն ուսման որեւէ ճիւղ ընտրելով ինչպիսի՞ դեր պիտի ստանձնեն իրենց անհատական թէ հաւաքական կեանքի վերելքին համար: Այս յստակացումները կարելի է յատկապէս պատանեկան տարիքէն երիտասարդական տարիք թեւակոխող աշակերտներուն համար:

Կայ այլ յոռի երեւոյթ մը եւս, որ կ'ազդէ մասնագիտական ճիւղի ընտրութեան վրայ: Այդ ալ ընկերային միջավայրին արժեւորումն է որոշ մասնագիտութիւններու, ինչ որ երբեմն անձը կը մղէ այդ միջավայրին տուրք տալու նկատառումով կատարելու իր ընտրութիւնը:

Մեր ընկերութիւնը, ցաւօք, երբեմն համալսարան ընդունուելու կիշին հիման վրայ կ'արժեւորէ որեւէ մասնագիտութիւն, առանց նկատի առնելու, որ յաջող աշակերտը իր նախասիրած մասնագիտութեան մէջ կրնայ յառաջադէմ ըլլալ ու ստեղծագործել:

Այս բոլոր հարցերը կարելի է յաղթահարել, եթէ երկրորդականի առաջին իսկ կարգերէն մեր աշակերտներուն պարզաբանումներ տրուին, համալսարաններու դասախօսներ հրաւիրուին, աշակերտներուն համար յստակ դառնան իւրաքանչիւր մասնագիտութեան աշխատանքի կարելիութիւններն ու պայմանները, եւ ըստայնմ, իրենց վկայականները անհատական թէ հաւաքական կեանքին ծառայեցնելու համոզումով ընտրութիւն կատարեն անոնք: Այս պարագային միայն մեր աշակերտները պիտի կարենան իրենց նախասիրութեան, կարողութիւններուն եւ տեսիլքին մէկտեղումով աւարտել երկրորդականը ու մասնագիտական ճիւղ ընտրութիւն կատարել, առանց տուրք տալու պայմաններուն եւ միջավայրին:

Սուրիական համալսարանները վերջին տարիներուն ճիւղաւորուած են տարբեր մասնագիտութիւններով, յագուրդ կու տան ուսումնատենչ մեր շրջանաւարտներուն եւ անոնց դիմաց կը բանան բարձրորակ մասնագիտացման այլազան ուղիներ:

Կրթական հաստատութիւններուն եւ ծնողներուն պարտքն է, ուրեմն, ուղղութիւն տալ աշակերտներուն: Երիտասարդ այս հունձքերուն վստահուած է վերջապէս մեր համայնքի բարեկարգման ապագան: Ազգային կեանքի մէկէ աւելի ուղորտներ մասնագիտացած մարդուժի կարիք ունին, ունի՞ք սակայն այդ մարդուժի պատրաստութեան նպաստելու եւ ըստայնմ անոր ներդրումէն օգտուելու ծրագիր եւ ռազմավարութիւն: ...

«Գ.»

-Կիրակի, 14 Յուլիսին, Հալէպի արեւմտեան գիւղերուն եւ «Ռաշիտին» արուարձանին մէջ կայք հաստատած, Թուրքիոյ աջակցութիւնը վայելող գինեալ ահաբեկչական խմբաւորումներ հրթիռակոծեցին Հալէպի արեւմտեան շրջանի «Հալապ Ընտիտ» եւ «Մսիէն» խաղաղ բնակչութեամբ եռուն թաղամասերը, ժամեր անց ռմբակոծուեցաւ նաեւ Հալէպի քաղաքապետարանը, ուր աշխատանքի մէջ էր քաղաքապետը եւ քաղաքապետարանի անձնակազմը: Արձանագրուեցաւ վեց գոհ, ինն վիրաւոր, ինչպէս նաեւ նիւթական վնասներ՝ քաղաքայիններու բնակարաններ, ինքնաշարժներ եւ այլ: Վիրաւորները տեղափոխուեցան «Ռազի» հիւանդանոց: Նոյն օրը, գիշերուան ժամը 11:45-ին, գինեալ ահաբեկչական խմբաւորումներ հրթիռակոծեցին Հալէպի «Մուհաֆազա» թաղամասը: Տեղական աղբիւրներ հաստատեցին, որ վնասները նիւթական են:



Երկուշաբթի, 15 Յուլիս 2019-ին, ՍԱՆԱ-ի թղթակիցը հաղորդեց, որ գինեալ ահաբեկչական խմբաւորումները բազմաթիւ հրթիռներ արձակեցին Հալէպի Համտանիէ եւ Ազամիէ թաղամասերուն ուղղութեամբ: Չոհուեցաւ քաղաքացի մը, վիրաւորուեցան ուրիշներ:

Սուրիական բանակը հակադարձելով ռմբակոծեց անոնց որջերն ու հրթիռարձակումի կեդրոնները: Հալէպի արեւմտեան գիւղերու գինեալ ահաբեկչական խմբաւորումները յաճախ կը հրթիռակոծեն քաղաքի արեւմտեան շրջանները՝ անապահովութիւն ու խուճապ ստեղծելու միտումով: Հակառակ այս բոլորին, Հալէպի մէջ կեանքը բնականոն հունով կը շարունակուի: Աստիճանաբար ընթացք կ'առնեն պետական եւ սեփական հաստատութիւններու վերականգնումի աշխատանքները:

-Կիրակի, 14 Յուլիս 2019-ին, Գամիշլիի Սիրիէն ուղղափառ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ մատուցուեցաւ:

Քանի մը օր առաջ եկեղեցւոյ դիմաց ահաբեկչական գործողութիւն մը տեղի ունեցած էր՝ թիրախ դարձնելով եկեղեցին:



Պատարագը տեղի ունեցաւ Ճեզիրէի եւ Եփրատի Սիրիան Ուղղափառ Թեմի Առաջնորդին նախագահութեամբ: Արարողութեան ընթացքին հաւատացեալները շեշտեցին, որ կարգաւ պիտի մնան Սուրիական Հայրենիքին, իսկ ահաբեկչական գործողութիւնները պիտի չյաջողին քայքայել սուրիական ընկերութեան հիւսուածքը:

-Երեքշաբթի, 16 Յուլիս 2019-ին, սուրիական «Շամ Թայմ» կայքը յայտնեց, որ 2011-էն ի վեր առաջին անգամ ըլլալով, սուրիական պատուիրակութիւն մը Նիւ Եորք կը մեկնի՝ մաս կազմելու մայրու բարգաւաճման միջազգային խորհրդարանական պաշտօնական խորհրդատուութեան մը:



Պատուիրակութեան այցելութիւնը տեղի կ'ունենայ Օմանի արտաքին գործոց նախարարին Դամասկոս այցելութենէն քանի մը օր ետք: Այս առիթով Սուրիոյ Խորհրդարանի Սփիւռքի եւ Արտաքին Յարաբերութիւններու Յանձնախումբի նախագահ Պուրոս Մըրճանէ «Ալ Ուաթան» թերթի թղթակիցին յայտնած է, որ Ուաշինկթըն շուրջ 7 ամիս առաջ մերժած էր պատուիրակութեան ԱՄՆ մուտքի արտօնագիր տալ:

-Սուրիական «Թշրին» թերթը կը յայտնէ, որ ուսումնասիրութիւն մը տեղի կ'ունենայ Հալէպի մէջ ոսկիի յատուկ շուկայ մը յառաջացնելու համար: Ծրագիրին համաձայն, տարածքը պիտի ընդգրկէ 250 խանութ, ինչ որ դրական ազդեցութիւն պիտի ունենայ քաղաքին բարգաւաճման վրայ: Թերթը վկայակոչելով Հալէպ նահանգի խորհուրդի գործադիր գրասենեակի անդամ Բու-մէյթ Ասի ալ Շէյխին խօսքը յայտնեց.



«Նպատակը Հալէպի մէջ ոսկիի յատուկ շուկաներ հաստատելն է՝ փոքրացուած քաղաքի մը ձեւաչափով, ուր տեղի պիտի ունենայ ոսկիի առ ու ծախսն ու ցուցարարութիւնը»:

# Լուրեր Հայաշխարհին

## ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՆԻՆԵԱՆ ՎԵՆԵՏԻԿԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԻՆ ՄԱՍԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՄԲ ՉԱՆԴԵՍ ՊԻՏԻ ՊԱՅ

«Երկիր».- Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարությունն յայտնած են. «ՀՀ Կառավարությունը եւ Արդարադատության Նախարարությունը հաւատարիմ կը մնան դատական իշխանության նկատմամբ վստահության վերականգնումին եւ դատական համակարգի առողջացումին ի նպաստ խորքային բարեփոխումներու իրականացման եւ այդ նպատակին հասնելու համար դատաւորի նկատմամբ կարգապահական վարոյթի յարուցման հիմքերու յստակացումին եւ ընդլայնումին, ինչպէս նաեւ դատաւորներու բարի վարքին եւ գոյքային դրութեան գնահատման առարկայական կառուցակարգի մշակումին:



դի Իրաւունքի գերակայութեան եւ մարդու իրաւունքներու հարցերով ընդհանուր տնօրէն Քրիստոս Ծիաքումպուլոսի, Վենետիկի Յանձնաժողովի նախագահ Ծիանի Պուկիկիոյի եւ Եւրոպական Խորհուրդի բարձրատիժան այլ պաշտօնեաներու հետ հանդիպումներու ընթացքին:

«Հանդիպումներու ընթացքին նախարարը գործընկերներուն ներկայացուցած է նաեւ դատախազական մարզին մէջ կառավարութեան մօտեցումները, կարճաժամկետ եւ երկարաժամկետ առաջնահերթութիւնները, լուծման հաւանական ուղիները, որոնք հաւանութեան արժանացած են բոլոր գործընկերներուն կողմէ:

Շար. Էջ 12 ➤

«Կլորուհանդերձ, քանի որ Եւրոպական Խորհուրդի «Ժողովրդավարութիւն՝ Իրաւունքի Միջոցով» Եւրոպական յանձնաժողովի (Վենետիկի Յանձնաժողով) 119-րդ նստաշրջանի գեկուցումին բովանդակութիւնը մամլոյ մէջ շահարկումներու տեղիք տուած է եւ շարք մը հարցեր յառաջացուցած, կը կարծենք, որ հարցը առաւելաբար կը վերաբերի «վեթիկն» (գտում) բառի մեկնաբանութեան եւ այն եղանակներուն ու ձեւին, որոնցմով այդ մեքանիզմը կիրարկուած է գանազան երկիրներու մէջ: Ի դէպ, առնուազն տարակուսակը կը յառաջացնէ այն փաստը, թէ ինչպէ՛ս սահմանափակ հասանելիութեամբ գեկուցումը կամ անոր բովանդակութիւնը հասանելի դարձած է հարցը միակողմանիօրէն շահարկող անձերու շրջանակին:


«Արդարադատութեան Նախարարութիւնը հաստատակամ է իր մօտեցումին մէջ, ըստ որուն՝ դատական համակարգի բարեփոխումի առանցքին մէջ պիտի ըլլան դատաւորի գոյքի, եկամուտներու, ծախսերու, շահերու յայտարարագրման կատարելագործումն ու բարեփոխումը, դատաւորներու բարի վարքի ու գոյքային դրութեան գնահատումին առնչուող առարկայական մեքանիզմներու արդիւնաւետ ներդրումն ու կիրարկումը: Ուստի, այս առումով որեւէ խզում չկայ նախապէս կատարուած յայտարարութիւններուն եւ Վենետիկի Յանձնաժողովի գեկուցումին միջեւ:

«Յատկանշական է նաեւ, որ Վենետիկի Յանձնաժողովի 119-րդ լիագումար նստաշրջանին (21-22 Յունիս 2019) յաջորդած է Հայաստանի Հանրապետության արդարադատութեան Նախարար Ռուստամ Բադասեանի այցելութիւնը Սթրասպուրկ (1-2 Յունիս), ուր այս գաղափարները անելի մանրամասնօրէն ներկայացուած եւ քննարկուած են Եւրոպական Խորհուրդի ընդհանուր քարտուղար Թիորպոռն Եակլանտի, Եւրոպական Խորհուր-

## ԱՐՃԱՆԻ ՄԵՋ ՀԻՄՆՈՒԵՅԱԼ ՅՄԸՄ-Ի 111-ՐԴ ՄԱՍՆԱՃԻՐԸ

ՀՄԸՄ-ի երկրորդ հարիւրամեակի ծրագիրներուն առաջնահերթութիւնը Արցախի մէջ ՀՄԸՄ-ի մասնաճիւղ հիմնելու անհրաժեշտութիւնն էր:

Արցախի մէջ ՀՄԸՄ-ի մասնաճիւղ ունենալու գաղափարը տարիներու փափաք էր, սակայն գանազան պատճառներով աշխատանքի սկիզբը յետաձգուած էր: Միութեան 100-ամեակի ձեռնարկներու ամբողջացումէն ետք,



Կեդրոնական Վարչութեան աշխատանքները կեդրոնացան Արցախի մէջ մասնաճիւղի հիմնադրութեան վրայ: Խորհրդակցութիւններէ ետք, տեսակցութիւն մը տեղի ունեցաւ Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակեանի հետ, որուն ընթացքին արծարծուեցաւ ՀՄԸՄ-ի Արցախի մասնաճիւղի հիմնադրութեան նպատակն ու հեռանկարները: Նախագահ Բակո Սահակեան իր դրական համագործակցութեան պատրաստակամութիւնը յայտնեց այս ուղղութեամբ:

Առ այդ, յաջորդող ամիսներու նախապատրաստական աշխատանքներէ ետք, 2 Յունիս 2019-ին ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւն մը գլխաւորութեամբ ատենապետ Եղբ. Գառնիկ Մկրտիչեանին, Արցախ մեկնեցան, ուր գումարուեցաւ Անդրանիկ Անդամական Ժողով եւ ընտրուեցաւ վարչութիւն բաղկացած հետեւեալ եղբայրներէն՝ Սեւակ Պօղոսեան, Դաւիթ Գրիգորեան, Արտակ Իշխանեան, Վրէժ Եսմէրեան եւ Վահրամ Յովսէփեան:

Չուգահեռաբար, Կեդրոնական Վարչութիւնը երկամսեայ ժամանակաշրջանով Արցախ գործուղեց խմբապետ մը, որ անհրաժեշտ գիտելիքները պիտի փոխանցէ տրակազ միմբապետական կազմին:

ՀՄԸՄ-ի Արցախի Մեկուսի Շրջանի հիմնադրութիւնը պաշտօնապէս պիտի կատարուի Օգոստոս 2019-ին, պետական ու ժողովրդային ներկայութեամբ:

ՀՄԸՄ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ՝ ԹՈՒՐԷՒՈՅ ԿՈՂՄԵ ԲՈՆԱԳՐԱԿԵԱՆ ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԿԻՊՐՈՍԻ ՄԵՋ ՉՏՆՈՒՈՂ Ս. ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆԷՐԻՆ ՄԵՋ



Ուրբաթ, 28 Յունիս 2019 թուականը Արամ Ա. կաթողիկոսին կեանքին մէջ իւրայատուկ նշանակութիւն ունեցող օր մը դարձաւ, երբ վեհափառը անցաւ Թուրքիոյ կողմէ բռնակազմուեալ հիւսիսային Կիպրոս՝ այցելելու համար հայ ժողովուրդին ու եկեղեցւոյ կեանքին մէջ յատուկ կարեւորութիւն ունեցող հոգեւոր կեդրոնները:

Վեհափառ հայրապետը, ընկերակցութեամբ Կիպրոսի թեմի կաթողիկոսական փոխանորդ Խորէն Արք. Տողրամաճեանի եւ Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի, այցելեց Նիկոսիոյ թրքական բաժինին մէջ գտնուող Ս. Աստուածածին եկեղեցին, Նոյն շրջափակին մէջ գտնուող Ազգային Առաջնորդարանը եւ Մելիքեան-Ուզունեան դպրոցը: Թրքական ներկայութիւնը զգալի էր ընդհանրապէս հայկական թաղամաս դարձած շրջանին եւ եկեղեցւոյ շրջափակին մէջ:

հաստատուած է Հալեվկա նահանգին ծայրամասը, Փենտաքթիլոս լեռներու լանջին՝ պատմական Կիլիկիոյ դիմացը: Աւելի քան 12 քառ. քմ լեռնալանջէն մինչեւ ծովեզերք տարածութիւն ունեցող գեղեցիկ բնութեան ծոցին գտնուող Ս. Մակարայ վանքը եղած է հոգեմտաւոր մշակոյթի կեդրոն՝ հարուստ ձեռագիրներով, իքոններով ու սրբապատկերներով: 1974-ին Կիպրոսի վրայ կատարուած թրքական յարձակումին պատճառով, Ս. Մակարայ վանքը ոչ միայն գրաւուած է թրքական բանակին կողմէ, այլ նաեւ քանդուած,

Շար. Էջ 14 ➤

## ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐՈՒ ՏՈՒՆԸ ՎԱԿԵՐԱՅՈՒՅ ՍՏԵՓԱՆԱՎԵՐՏԻ ՕՊԱԿԱՅԱՆԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ ԵՐԱՇԽԱԽՐՈՂ ԸՆԲՄԸՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ

«Ասպարէզ».- Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը կը տեղեկացնէ, թէ Ներկայացուցիչներու տունը 11 Յունիսի յետմիջօրէին, 234 թեր եւ 195 դէմ քուէներով վաւերացուց Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի օդակայանին ապահովութիւնը երաշխաւորելու նպատակը հետապնդող քննկրեսական Պրետ Շըրմընի առաջարկը, որ քանի մը օր առաջ Օրէնքերու յանձնախումբին կողմէ եւս վաւերացուած էր:



Շըրմընի կողմէ Միացեալ Նահանգներու կառավարութեան 2020ի ռազմական ամսական իրերու յաւելուած (թիւ 21) ներկայացուած այս առաջարկը:

Շար. Էջ 14 ➤

ԱԿՆԱՐԿ

ԱՐՅԱԽԻ Ի ՆՊԱՍՏ ՅԱՂԹԱՆԱԿ ՄԸ



Ս. Մահսեդեան

Միացեալ Նահանգներու Ներկայացուցչական Տունը Զինգզաբթի, 11 Յուլիսին որդեգրեց բանաձեւ մը, որ ամերիկեան կառավարութեան կ'արգիլէ Ատրպէյճանին ծախել այնպիսի զէնքեր, որոնք կրնան գործածուիլ Ստեփանակերտի օդակայանը օգտագործող օդանաւերու դէմ: Ատրպէյճանի այս սպառնալիքին եւ անոր յաճախակի գործադրութեան հետեւանքով, Արցախի մայրաքաղաքին օդակայանը անդամալոյծ կը մնայ տասնամեակներէ ի վեր:

Բանաձեւը ժողովին ներկայացուցաւ Պրետ Շըրմընի կողմէ. անոր պատրաստութեան մասնակից էին Ճեքի Սփիր, Ֆրէնք Փըլոն եւ Էտըմ Շիֆ. բանաձեւը որդեգրուեցաւ 195-ի դէմ 234 ձայնով:

Սա ամեն բանէ առաջ կարելոր յաղթանակ է ի նպաստ Արցախին, ապա նաեւ Զայ Դատի Յանձնախումբին, որուն ներկայացուցիչը ողջունեց բանաձեւին որդեգրումը, իսկ Արցախի Արտաքին Գործոց Նախարարութիւնը այս որոշումը նկատեց Արցախի անկապտելի իրաւունքին ճանաչումը:

Սա նաեւ յուշարար մըն է, որ հայկական կողմին քաղաքական աշխատանքները միշտ ապարդիւն չեն մնար, այլ պետք է անդադարնանք, որ ձեռնածալ չմնալով՝ կըրնանք այս ու նմանօրինակ յաղթանակներ ապահովել, մանաւանդ եթէ կարենանք մեր ճիգերն ու կարողութիւնները մէկտեղել...

\*\*\*

Քուէարկութեան արդիւնքին կողքին, կ'արժէ լուսարձակի տակ բերել քանի մը այլ իրականութիւններ, մանրամասնութիւններ:

Ա. - Բանաձեւը որդեգրուեցաւ խորհրդարանի երկու խմբաւորումներէն՝ դեմոկրատ եւ հանրապետական ներկայացուցիչներէ գոյացած մեծամասնութեան մը քուէներով. 225 դեմոկրատ, 9 հանրապետական թեր քուէարկեցին բանաձեւին, դէմ քուէարկեցին 187 հանրապետական, 7 դեմոկրատ եւ մէկ անկախ ներկայացուցիչ: Պատկերը առանձին մեկնաբանութեան արժանի է:

Բ. - Ուշագրաւ էր բանաձեւին՝ Պրետ Շըրմընի պաշտպանողականը. ան յայտարարեց, որ Պաշտպանութեան Նախարարութիւնը պետք չէ զէնք տրամադրէ Ատրպէյճանին, որ կը սպառնայ այդ զէնքերը գործածել Ստեփանակերտի օդակայանը օգտագործող օդանաւերու դէմ ու յիշեցուց, որ աշխարհի տարբեր շրջաններու մէջ նման ոճրային արարքներու զոհ գացած են բազմաթիւ օդանաւեր, պատճառելով մարդկային մեծ կորուստներ, ի շարքին՝ ամերիկեան խորհրդարանի անդամ մը: Շըրմըն մէկէ աւելի առիթներով շեշտեց, որ Արցախը

անկախ հանրապետութիւն է, որ նախապէս կը կոչուէր Լեռնային Ղարաբաղի Զանրապետութիւն, թէ՛ անիկա Ստալինի մէկ կամայականութեան, եւ ի շահ խորհրդայիններուն շնորհուած էր Ատրպէյճանին, միևնույն արդէն անկախ հանրապետութիւն է տասնամեակներէ ի վեր ու կը դիմակալէ ազերիական



սպառնալիքներ. կարելի չէ ընդունիլ, որ նման սպառնալիքներու իրականացումը ըլլայ ամերիկեան զէնքերով. (Զէնք ուզեր հաւատալ, թէ Շըրմըն պիտի ընդունէր, որ Ատրպէյճան ռուսական, իսրայէլեան կամ այլ տեղէ ձեռք բերուած զէնքերով իրագործէր սպառնալիքը...): Ան միայն մէկ դուռ բաց ձգեց, ըսելով, որ զէնքերու յանձնումը կրնայ պատահիլ այն պարագային, երբ նախագահը երաշխաւորէ, թէ անոնք պիտի չծառայեն Պաքոյի ծանօթ սպառնալիքներուն իրականացման:

Գ. - Շըրմընի հակաճամբէ միայն հանրապետական Ռանըլտ Ռայթ, որ հանդէս եկաւ «դաշնակից Ատրպէյճան»ի զէնք յանձնելու պաշտպանողականով. իր տեսակետը հիմնաւորելու համար, ան հաւաստեց, որ Ատրպէյճան ահաբեկչութեան պայքարին մէջ դաշնակից մըն է, ամերիկեան ուժերու կողքին է Աֆղանիստանի մէջ, կը գտնուի Միացեալ Նահանգներու հակադրուող իրանին ու Ռուսիոյ միջեւ, իսկ Ուքրանիայէն ու Վրաստանէն ներս ռուսական միջամտութիւնները ծանօթ են: Աւելին, ան Արցախի հողերը որակեց «հայերու կողմէ գրաւուած տարածք», նկատելով որ զէնքի յանձնումէն ետ կենալով՝ Միացեալ Նահանգներ այսուհետեւ պիտի դադրին այս տագնապին «չէզոք միջնորդ» մը ըլլալէ, պատճառ պիտի ըլլան «դաշնակից Ատրպէյճան»ի զինական կարողութեան նահանջին: Ռայթ յայտնապէս յիշողութեան կորուստէ կը տառապի, որովհետեւ որեւէ ակնարկութիւն չըրաւ Ազրպէյճանի աղաղակող սպառնալիքներուն ու արարքներուն: Փաստօրէն, Ազրպէյճանի քաղաքային օդանաւորութեան մէկ բարձր-

աստիճան պատասխանատուն 2011-ի Մարտին առանց բառերը ծամծմելու յայտարարած էր, թէ Ատրպէյճան զգուշացման իրաւեր ուղղած է օդանաւորութեան միջազգային կազմակերպութեան, սպառնալով, որ Ստեփանակերտի օդակայանը գործածող օդանաւեր «ֆիզիքապէս քանդու մի պիտի ենթարկուին»...

Կարելի է երկար մեկնաբանել ու մէկ առ մէկ քանդել այսպիսի պաշտպանողականի մը հիմքերը, ներկայացուցած առարկութիւնները, սակայն որեւէ հայու, նաեւ շրջանի ծանօթ իրադարձութեանց հետեւողին համար, անամպ երկինքէն շողացող արեւուն չափ յստակ է, թէ նման պաշտպանողականի մը

կ'արժէ միայն յիշեցնել, որ այսօր, ամերիկեան 49 նահանգներ որդեգրած են Յեղասպանութեան ճանաչման բանաձեւ, ի հեճուկս դաշնակցային գործադիրին, հոն եւս բանալով մարտահրաւերի խոր դուռ մը, որ ճանաչումէն ետք կայ նաեւ արդար հատուցման պայքարի ուղին...

\*\*\*

Ներկայացուցիչներու տան կողմէ այս բանաձեւին որդեգրումը, յաղթանակ մը ըլլալով հանդերձ, վախճանական լուծում չէ. նման բանաձեւեր վաղը կրնան իրենց դէմ գտնել միևնույն իսկ նախագահական միջամտութիւն, որովհետեւ յայտնի է, թէ Սպիտակ տան պետք շրջապատող նախարարներ ու խորհրդականներ մաս կը կազմեն զէնքերու վաճառքի ջատագովներու եւ պատերազմներ իրաւորողներու նուազախումբին: Եթէ միայն նկատի ունենանք մեզի համար ռազմավարական իմաստով մեծ նշանակութիւն ունեցող Իրանի պարագան, առանց անտեսելու Վրաստանի նորագոյն զարգացումները, արդէն կարելի է պարզ աչքերով տեսնել, թէ հայկական դիւանագիտութիւնն ու Զայաստան-Արցախ պաշտպանութիւնը ինչպիսի՞ մարտահրաւերներու դիմաց կը դնեն մեզ, եւ որքան կեղծ կը ինչէն դուրսէն կատարուած այն «ներշնչումները», թէ Զայաստանն ու Ատրպէյճանը պետք է նախապատուութիւն տան մարդասիրական նախաձեռնութիւններու եւ ընդարձակեւ երկու ժողովուրդներուն միջեւ սիրոյ ու բարեկամութեան ենթահողը: Սխալ չհասկցուինք. Զայաստանի անկախացումէն տասնամեակներ առաջ, 60-ականներուն, բայց մանաւանդ անկախացումէն ասդին, ո՛վ որ ալ եղած է Երեւանի դէկին պատասխանատուն, ան իր դիմաց գտած է Նոյն՝ նախապարձակ ու թշնամի Ատրպէյճանը, որուն ձեռքը միշտ ամուր բռնած է Նոյնքան թշնամի Թուրքիոյ ձեռքը: Օղակը կարելի է ընդարձակել...

Անգլիացիք ունին լաւ խօսք մը. «Զէնքի վառողը միշտ չոր պահէ»: Մենք ալ ձայնակցած ենք այլ նշանաւոր խօսքերու՝ կը նախընտրենք ձիթնի ճիւղը բարձր պահել, սակայն չենք ուզեր վար դնել զէնքը, ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ ԶԵՆՔ, այնքան ատեն, որ հակառակորդը չէ որդեգրած խաղաղութեան անդառնալի ուղին:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Հանգուցեալներ ԱՐՏԱՒԱԶԴ ՏՆԿԻԿԵԱՆԻ (ԱՊՈՒ ԱԶԻԶ) 14-րդ տարելիցի Եւ ԲԵՆԵԼՈՒԲ ՏՆԿԻԿԵԱՆԻ 9-րդ տարելիցի Զանգուցեալներուն հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 21 Յուլիս 2019-ին, յաւարտ Ս. Եւ Ամմահ Պատարագի՝ Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սալիպէ - Զալէպ: Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս:



### ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՏԱՏԱԾ Է ԹՈՒՐԵՒՈՅ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՅՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԸ

«Էրմենիհապեր».- Եւրոպական Միութիւնը (ԵՄ) Կիպրոսի ափամերձ ջուրերուն մէջ հորատման աշխատանքներու պատճառով Թուրքիոյ դէմ պատճառաւոր լիքառած է:

ԵՄ արտաքին գործոց նախարարներու մասնակցութեամբ Պրիւքսելի մէջ տեղի ունեցած Արտաքին Յարաբերութիւններու հորհուրդի նիստէն ետք յայտարարութիւն մը հրատարակուած է: Ըստ այդմ՝ ԵՄ որոշած է առայժմ դադարեցնել Անգարայի հետ բոլոր բարձրամակարդակ հանդիպումները, որոնք կարգին՝ Թուրքիոյ հետ օդային փոխադրութեան համապարփակ համաձայնագիրի շուրջ բանակցութիւնները եւ ԵՄ-Թուրքիա գործընկերութեան խորհուրդին նիստերը:

Կը նախատեսուի նաեւ, որ Եւրոպական հորհուրդը նուազեցնէ 2020-ի համար Թուրքիոյ տրամադրուելիք նիւթական աջակցութիւնը:

Յիշեցնենք, որ Կիպրոսի յարակից ջրային տարածքին մէջ բնական կազի պաշարներու որոնման իրաւունքը վերջին տարիներուն լարուածութեան պատճառ հանդիսացած էր: Թրքական «Fatih», «Barbaros Hayreddin Pasa» «Yavuz» նաւերը Միջերկրական ծովուն մէջ հորատման եւ որոնման աշխատանքներ կը կատարեն: Կիպրոսը, Յունաստանը, ԱՄՆ-ն, Եգիպտոսը եւ Եւրոպական Միութիւնը պարբերաբար հանդէս կու գան այդ աշխատանքները դադարեցնելու կոչով:



#### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բերիոյ Հայոց Թեմի Կալուածոց Հոգաբարձութիւնը, Կալուածոց գրասենեակին համար կարիքը ունի երկու պաշտօնէտայի:

- Թեկնածուները պարտին ունենալ
- Ուսումնարանի վկայական կամ նուազագոյնը՝ Պաքալորիա:
- Տարիքը ըլլայ (25-40)-ի միջեւ
- Պետական հիմնարկներուն հետ գործակցութեան կարողութիւն:
- Հայերէն եւ արաբերէն լեզուի տիրապետում (գրել-կարդալ):
- Պայմանները ամբողջացողները կրնան դիմել Կալուածոց գրասենեակ:

**Բերիոյ Հայոց Թեմի Կալուածոց Հոգաբարձութիւն**

#### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հալէպի «Զարմէլիդ»-ի շրջանին մէջ գտնուող, համաքրիստոնէական ժամանակաւոր գերեզմանատունէն Հայ Առաքելական Եկեղեցւոյ ննջեցեալներու աճիւնները Ազգ. Գերեզմանատուն փոխադրելու ծրագիրը, պետական եւ եկեղեցական օրէնքներու յարգումով կը շարունակուի եւ արդէն հասած է իր աւարտին:

Արդ, կը խնդրենք պատերազմի տարիներու հանգուցեալներու պարագաներէն, որոնք մինչեւ օրս չեն ներկայացած տեղափոխելու իրենց պարագաներու աճիւնները, դիմել Ազգ. Գերեզմանատուն, քարտուղարութեան գրասենեակ՝ ամենաուշը մինչեւ 30 Օգոստոս 2019, իրենց հետ բերելով հանգուցեալին թաղման ստացագիրը, որպէսզի ծանօթանան կատարուելիք կարգադրութիւններուն, ամբողջացնեն անհրաժեշտ փաստաթուղթերու ներկայացումը եւ կատարուին փոխադարձ յանձնառութիւնները:

Դիմումները կը կատարուին ամէն օր, առաւօտեան ժամը 10:00- 2:00 բացի Կիրակի օրերէն, Ազգ. Գերեզմանատան մէջ, քարտուղարութեան գրասենեակը:

Չներկայանալու պարագային, մնացեալ աճիւնները վերոյիշեալ թուականէն ետք պիտի տեղափոխուին եւ գտնուուին Ազգ. Գերեզմանատուն՝ փեթակներուն մէջ:

Վստահ ենք, որ մեր յարգելի ժողովուրդը հասկացողութեամբ պիտի վերաբերի այս տնօրինումներուն հետ եւ մեր ննջեցեալներուն աճիւնները պիտի գտնեն իրենց հանգիստը Ազգ. Գերեզմանատան մէջ:

**Բերիոյ Հայոց Թեմի Կալուածոց Հոգաբարձութիւն**

### ՁԱԽՈՂՈՒԹԻՒՆԸ ՅԱՂԹԱՅԱՐԵԼ ՈՉԵՒՈՐԻՉ ԵՒ ՄՐՏԱՊՆԴԻՉ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐՈՎ



Խաչիկ Շահինեան

Ծանօթ եւ փաստարկուած իրողութիւն է, որ երբեմն ձախողութիւններ իրենց առթած ցնցումով ու կակիծով վերափոխիչ, օգտակար եւ բուժարար անդրադարձ կ'ունենան մարդ արարածի կենսընթացին վրայ: Ու քիչ չէ թիւը այն ապացոյցներուն, որոնք կը վկայեն, որ յաճախ ձախողութիւնը կը վերածուի խթանիչ եւթափողի եւ զգաստութեան ազդակի յաջողութիւն արձանագրելու համար: Նաեւ շատ հաւանաբար լիարժէք յաջողութիւնը չժողովի մարդուս, եթէ բարարաչափ ձախողութիւններ յղկած ու կոփած չըլլան զայն: Այլ խօսքով՝ գիտակից եւ զգօս մարդը իր ձախողութիւններէն կը սորվի նոյնքան, որքան իր յաջողութիւններէն:

Անշուշտ այս հանգամանքը պէտք չէ ընդունիլ որպէս ձախողութեան կոչ կամ դժուարութեանց որոնում, այլ կենսափորձով ապացուցած անյեղի ճշմարտութիւն: Այստեղ պէտք է շեշտել, թէ տարողունակ ձախողութիւններն ու դժբախտութիւնները թեկուզ ունենան հատու եւ վշտացող, բայց միաժամանակ ազդու եւ զգաստացող ներգործութիւն, որ կրնայ մարդու մղել տկարութիւններ շրջանցելով եւ դարմաններ որոնելով զօրակէտեր նուաճելու եւ հասունութիւն ձեռք ձգելու:

Առաքինի, քաջ եւ հաստատակամ մարդիկ անկասկած կ'անդրադառնան իրենց թերիներուն եւ գանոնք սրբագրելով կը բարելաւեն իրենց անբարեյոյս ու աննախանձելի կացութիւնը, հասնելով անսպասելի յաջողութիւններու:

Ճիշդ է՝ որ գործի, ուսման, սիրոյ եւ տնտեսական ձեռնարկներու մէջ շատ հեղ մարդիկ կը դիմագրաւեն ընկրկումներ եւ ձախողութիւններ, սակայն պէտք է ընդունիլ թէ յաջողութիւնն ու գերագանցութիւնը սահմանափակուած չեն ոչ ոքի համար, կամ մենաշնորհները չեն որել մէկուն:

Արդարեւ, յաջողութեան առաջնորդող բոլոր ճանապարհները կը մնան բաց եւ հարթ բոլորին դիմաց: Իսկ մեզի վերապահուած է, արիաբար, թեկուզ արկածախնդրութեան գնով, նախ առիթներ որոնել, ապա ընծայուած այդ պատեհութիւնները օգտագործել, նոյնիսկ եթէ մեծագոյն անյաջողութեան հանդիպած ըլլանք կանխապէս:

Երկրագունդի վրայ ամէն ոք ձախողութեան ենթակայ է, բայց այս պարագան պէտք չէ ընդունիլ իբրեւ անխուսափելի եւ անզնայառելի իրողութիւն, նաեւ պէտք չէ արտօնել՝ որ մեղկութիւնը, տկարացումն ու պարտողականութիւնը երբեւիցէ կլանեն մեզ, փակ օղակի

մէջ բանտելով մեր ինքնութիւնը:

Յաջողակ անձնաւորութիւններ, դժուար թէ տեղի տան եւ ընկճուին ձախողութեանց առջեւ: Անոնք մինչեւ իսկ կը խուսափին որեւէ առիթով օգտագործել «ձախողութիւն» բառը, զայն փոխարինելով այլ մեղմացուցիչ տարազներով ու որակումներով:



Արդ, հիմնահարցը կը մնայ վերահասու ըլլալ սխալին եւ չափել անոր տարողութիւնը, յետոյ ճշգրիտ փաստաճանաչումով սրբագրել ու յաջողութեան անկիւնաքարի շրջել զայն:

Երբ արգելակիչ պատճառներ բազմանալով եւ դժուարութիւններ բարդուելով ակամայ անյաջողութեան գիրկը կը նետեն մեզ, պէտք չէ որ բարոյալքութեան անձնատուր ըլլանք եւ մենք մեզ դասենք ձախողածներու շարքին, նախախնամութեամբ իսկ ի սկզբանէ տնօրինուած բախտ ու ճակատագիր համարելով այդ իրավիճակը, որմէ ձեռքբերուած գրեթէ անհնար է ու անկարելի:

Այսպիսի յուսաբեկ պարագաներու, կամքն ու կորովը առաջնահերթ դերակատարութիւն ունին ձախողութեան ուրուակակնը հեռացնելու եւ մեզ խրախուսելու գծով, նոյնիսկ երբ բոլոր ելքերը փակուած նկատուին մեր դիմաց:


Պէտք չէ մտահան ընել, որ յաջողութեան եւ ձախողութեան հաւանականութիւնները միշտ ալ կը մնան առգոյ բոլորին համար եւ անոնց սահմաններու ընդարձակումն ու սեղմումը կախեալ է նոյնիսկ ինչպիսի ամառկայ անձէն:

Կեանքը ազատ եւ հսկայ դըպրոց մըն է նոր հմտութիւններ, փորձառութիւններ եւ յաւելեալ հասունութիւն ընձեռնելու համար այն փորձիչ հարցերուն մէջ, որոնք կը սպառնան մեզի, ու կը մղեն մեզ քաջաբար ուղղուելու դէպի այլ ասպարէզներ առանց վարանումի ետդարձ կատարելու, կամ անցեալի հաշտուիլ դրոյն չափով ափսոսալու:

Նախապատրաստութիւնն ու կանխագուշտութիւնը անկռահելի անակնկալներու եւ յոռեգոյն հաւանականութեանց դէմ, առաւելագոյնս կ'օժանդակեն մեզի բազում սխալներու առաջը առնելու եւ մեզ ձախողանքը ու սայթաքումները հեռու պահելու: Իրօք՝ գործադրումը հանգամանօրէն սերտուած եւ իմաստունօրէն նախագծուած

ԱՌԱՍՊԵՆՆԵՐՈՒ ԾԱՍԲԱՆԵՐՈՎ

-5-



Յուշիկ Ղազարեան

Հայր Աստուածը

Ուշ կամ կանուխ մարդ արարածը պիտի նայեր երկինքի աստղերուն...



բոլորին մէջ անխտիր, գտած են երկինքի հետ կապուած հոգ օր աստուածութիւններ...

Dyeus արմատը գանազան լեզուներու մէջ առած է տարբեր ձեւեր: Այսպէս օրինակ, հինստուներու հաւատալիքներուն մէջ կը հանդիպինք երկինքի ամենակարող աստուած Տիուսին հետ...

Հայկական դիցարանին եւ աւանդավէպերուն մէջ կը հանդիպինք մէկէ աւելի հօր տիպարի: Անոնցմէ ամենէն ուշագրաւները Արամազդն ու Հայկն են:

ամնչութիւնը հայ ազգի ծագումնաբանութեան հետ: ԶԷ՞ որ Պատմահայրը մեր ժողովուրդի գոյգ անուանակոչումները վերագրած է Արամ(ազդ) եւ Հայկ նահապետներուն:

Հայկը նոյն ինքն Արամազդն է (Հայր Արամազդ), Արարիչ Ռազմիկը (զերմանական Տիրը), որ դէմ դնելով մութ ու քառասյան ուժին՝ Բելին, կրցաւ ստեղծել Հայոց Աշխարհը՝ տիեզերքը:

Կարելի է անտեսել Հայկի աւանդավէպին եւ Բաբելական արարչագործութեան վէպին միջեւ նմանութիւնները: Ըստ Բաբելական արարչագործութեան վէպին, Թիանմաթ՝ քառասյան ուժերու դիցուհին այնքան կը գօրանայ եւ ատելութեամբ ու վրէժի նդրութեամբ կը լեցուի միս աստուածներուն հանդէպ, որ կը ստեղծէ գազանային իր բանակը եւ կը սկսի յարձակումը:

ՆՐՋԱՊՏՈՅՏ՝ ԼԱԹԱՔԻԱՒԵՍԱՊ



Արշամ Երէքեան

Ասիկա 2-րդ պտոյտս էր դէպի Լաթաքիա եւ Քեսապ, այս անգամ ընկերակցութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տեր Մասիս Սրբազան Եպիսկոպոս Չօպուեանի:

Երկուշաբթի, 8 Յուլիսին, միջօրէի ժամը 12:00-ին, ուղղուեցանք Քեսապ՝ այցելելու Քուէլթէն նոր եկած ազգային գործիչ, ճարտարապետ Մուհիր Դարբինեանին, որ ազգային իր երկարամեայ ծառայութիւններուն շնորհիւ սերտ յարաբերութիւն ուներ սրբազան հօր հետ:



Այս այցելութիւնը ինծի առիթ պիտի տար քննարկելու մեր Եազուպիէի եւ անոր սրբավայրերուն անորոշ ապագան, այն համոզումով, որ օր մը անպայման մեր սիրելի գիւղաքաղաքը պիտի ազատագրուի եւ պիտի վերադառնայ Սուրիոյ հարազատ գիրկը:

Այո՛, ծովագերեայ այս այցելութիւնը ինծի համար յարմար առիթ էր Եազուպիէի նիւթը արծարծելու երկու անձնաւորութիւններու հետ:

Թեպէտեւ սրբազան հօր այցելութիւնը ուներ անձնական բնոյթ, սակայն ան կ'ուզէր անպայման օգտուիլ առիթէն ու իր հանգիստի ժամերու հաշւոյն հանդիպումներ ունենալ տեղւոյն թաղական խորհուրդներուն եւ հոգեւոր հովիւներուն հետ:

Երեկոյեան ընթրիքի ընթացքին մեր խօսակցութեան ամբողջ նիւթը Եազուպիէն էր, Եազուպիէի հայկական գաղութը, պատմական մեր գաղութը: Առաւօտեան կանուխ արթնցայ: Ժամը 9:30-ին պիտի ուղղուէինք Մուհիրի քրոջ տունը՝ նախաճաշի: Ժամը ուրիշն արդէն պանդոկի սրահն էի:

- Ո՛հ, մենք չգիտցորեցինք, - ու ժպտով շարունակեց. - մենք գտնուեցանք տեղ մը, ուր բոլորը կը պարեին, իսկ մենք պարել չէինք գիտեր: -Ի՞նչ կայ որ, պարել կը սորվինք եւ մենք ալ կը պարենք, - ըսի: -Ո՛հ, մենք չէնք կրնար սորվիլ, որովհետեւ քիչ ենք, - ըսաւ: Ես ըմբռնեցի իր ըսել ուզածը եւ նիւթը փոխելով ըսի, որ Քեսապը գեղեցիկ վայր մըն է:

Խօսակիցս ժպտով պատասխանեց. - Երբ Աստուած իւրաքանչիւր ազգի հող տուաւ, հայը հոն չէր: Իսկ յետոյ երբ իրաւունքը պահանջեց, Աստուած հարցուց. - Ո՞վ ես դու: Աստուած փոշոտ տետրակը բացաւ, հողամաս մը ընտրեց, սահմանները գծեց եւ ըսաւ:

- Այս է ձեր հողը: Աշխատեցէ՛ք անոր տեր դառնալ եւ պահել գայն: Այս փորձառու մարդուն դատողութիւնները հրապուրեցին զիս. մեծ սիրով կը շարունակէի լսել զինք, սակայն ստիպուած էի հրաժեշտ տալ, որովհետեւ սրբազան հայրը արդէն իջած էր եւ ժամն էր նախաճաշի մեկնելու:

Նախաճաշէն ետք, ժամը 11:00-ին, մեր բարեկամին եւ իր եղբօր՝ ճարտարապետ Սեդրակին ընկերակցութեամբ գացինք Լաթաքիոյ ճաշարաններէն մին, ճաշի հաճելի պահ մը ունենալու Լաթաքիոյ եկեղեցւոյ թաղականութեան ատենապետ տիար Աւետիս Կարպուշեանի հետ: Հոս առիթ ունեցանք խօսելու Լաթաքիոյ մէջ հաստատուած Եազուպիէի հայ աշակերտութեան վիճակին եւ անոնց օգտակար դառնալու կարելիութիւններուն մասին: Հոս եւս ի յայտ եկաւ սրբազան հօր բարութիւնն ու լրջամտութիւնը: Պարոն Կարպուշեան վստահեցուց մեզի, որ Եազուպիէի որեւէ հայ աշակերտ դուրս պիտի չմնայ հայ դպրոցէն:

Այսպիսով վերջ գտաւ մեր շրջապտոյտը, որ լի էր հաճելի եւ ուրախ անակնկալներով:

## ԱՄՆ-ՀԻՒՄԻԱՎՅԻՆ ՔՈՐԻԱ, ԱՄՆ-ԻՐԱՆ. ԿԱՐՆ, ԱՐԳԵՕՔ, ՆԱԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ

**ԱՄՆ-իրան յարաբերություններու լարուածութեան հերթական փուլի ֆոնին՝ շատերը կը հետաքրքրէ թէ կարելի՞ է, արդեօք, թեհրան-Ռաշինկըն յարաբերություններու կարգաւորման համար ենթադրել Փիոնկեանկ-Ռաշինկըն յարաբերություններու բնականոնացման ընթացքը, թէ՞ ոչ: Գարգին շուրջ Yerkir.am-ը զրուցած է Alikonline-ի պատասխանատու-խմբագիր Արամ Շահնագարեանի հետ:**



«Կը փափաքէի հարցումին պատասխանել հարցումով՝ Իրան ունի՞ ԱՄՆ-ի հետ բանակցելու փափաք, թէ՞ ոչ: Այլ խօսքով՝ Իրան կը փափաքէ՞ Զիւսիսային Զորիայի վերածուիլ, թէ՞ ոչ», ըսաւ Արամ Շահնագարեան՝ անեցնելով, որ փորձագետներ ճիշդ այս հարցն է որ ելակետային կը համարեն:

Ըստ Շահնագարեանի, հարցումին պատասխանելու համար անհրաժեշտ է նախ նկատի առնել Իրանի եւ Զիւսիսային Զորիայի միջեւ առկայ աշխարհաքաղաքական տարբերությունները եւ, անոնց համընթաց, ԱՄՆ ներքաղաքական զարգացումներն ու իրադարձութիւնները:

«Եթէ մէկ կողմ թողունք Իրանի եւ Զիւսիսային Զորիայի պատմական տարբերությունները՝ երկու երկիրներու ղեկավարման հիմքը տեղադրուած գաղափարախօսութիւնն ու փիլիսոփայութիւնը, անցած պատմական ուղին եւ քաղաքական գործընթացներու զարգացումը, վերջապէս՝ ԱՄՆ-ի հետ յարաբերություններու պատմութիւնը եւ ընթացքը, որոնց անդրադառնալը, բնականաբար, բաւական ժամանակ կը խլէ, հաստատապէս կարելի չէ անտարբեր անցնիլ երկու երկիրներու աշխարհաքաղաքական տարբերություններուն, անոնց դրացի երկիրներուն եւ, ընդհանրապէս, տարածաշրջանային խաղացողներու վարքագիծին եւ վարուելակերպին վրայէն: Զմոռնանք, որ Զիւսիսային Զորիայի հարաւային դրացին Զարաւային Զորիան է, որ, ինչպէս փորձագետներ իրաւացիօրէն կը շեշտեն, բնաւ այլ շահագրգռուած չէ իր հիւսիսային դրացին քաղաքական համակարգի փլուզումով եւ, ընդհանրապէս, երկու ազգակից երկիրներուն միացումով, քանի որ անոր քաղաքական, տնտեսական, մշակութային եւ հասարակական առեւտրի հետեւանքները իրականութեան մէջ ինք պիտի կրէ: Թեհրէս ճիշդ այդ պատճառով է, որ երկրի գործող նախագահը մեծ արկածախնդրութեան դիմած է՝ միջնորդական աշ-

խոյժ առաքելութիւն ստանձնելով Փիոնկեանկի եւ Ռաշինկընի միջեւ», ըսաւ Արամ Շահնագարեան:

Ինչ կը վերաբերի միւս երկու դրացիներուն՝ Ռուսաստանին ու Չինաստանին, ըստ Շահնագարեանի, անոնք կը համարուին Զիւսիսային Զորիայի հիմնական դաշնակիցները, որոնք Փիոնկեանկի խաղաքարտը կ'օգտագործեն տարածաշրջանի մէջ ամերիկեան ազդեցութիւնը սահմանափակելու համար եւ նոյնպէս չեն ուզեր այդ երկրի քաղաքական համակարգին փլուզումը: Իսկ տարածաշրջանային միւս խաղացողը՝ Դաւիթը, թեւ կը ճրգտի ապամիջուկային տեսնել Փիոնկեանկը, այդուհանդերձ, դէմ է տարածաշրջանին մէջ յաւելելու լարուածութեան ու նոր մարտահրաւերներու յայտնաբերման: «Շեշտեմ, որ սա քորիական թերակողգիին եւ Զեռաւոր Արեւելքին հարցերով գրեթէ բոլոր փորձագետներուն տեսակէտն է», անեցնուց Արամ Շահնագարեան:

Անդրադառնալով Մերձավոր Արեւելքի աշխարհաքաղաքական դասաւորումներուն եւ զարգացումներուն՝ Արամ Շահնագարեան պարզեց, որ նոյնը կարելի չէ ըսել Իրանի եւ անոր դրացիներու յարաբերություններուն մասին:

«Եթէ Զիւսիսային Զորիայի տարածաշրջանային ազդեցութիւնն ու գիւնուորական շարժման կարելիութիւնը սահմանափակ են, նոյնը կարելի չէ ըսել Իրանի պարագային: Պէտք չէ անտեսել այն պարզ իրողութիւնը, որ Պարսից ծոցի տարածաշրջանին մէջ Իրան տիրական ներկայութիւն է, եւ ոչ մէկ պարագայի կը գիշի իր դիրքերը: Ընդգծեմ՝ սա բացառուած է, քանի որ Պարսից ծոցին մէջ Իրան ունի կենսական շահեր, որոնցմէ պատրաստ չէ հրաժարելու: Աւելին՝ ան Մերձավոր Արեւելքի մէջ եւս տարածաշրջանային գերտիրութիւն կը համարուի, կարելի էր ազդեցիկ խաղացող ու հաւասարակշռող ուժ: Այս դիրքերէն Իրան նոյնպէս չի հրաժարիր երբեւիցէ:

Ինչ կը վերաբերի դրացի երկիր-

ներուն, Զիւսիսային Զորիայի հետ բաղդատած, պատկերը դարձեալ կտրականապէս կը տարբերի: Մեռտական Արաբիան եւ ԱՄԷ-ն՝ իբրեւ Իրանի հետ ծովային սահման ունեցող երկիրներ, իսկ Իսրայէլը՝ իբրեւ, այսպէս կոչուած, տարածաշրջանային դրացի, կտրականապէս դէմ են Իրանի դէմ ճնշումներու թուլացման: Աւելին՝ անոնք ոչինչ կը խնայեն ԱՄՆ-ն Իրանի դէմ գոնէ սահմանափակ գիւնուորական հակամարտութեան մէջ ներքաշելու համար, որ իրականութեան մէջ կ'արտայայտուի Իրանի ռազմավարական նշանակութիւնն ունեցող կէտերը հարուածելով: Պէտք չէ մոռնանք կարելի էր հանգամանք մը եւս՝ եթէ Զիւսիսային Զորիայի շուրջ ակնկալուած զարգացումները կը սահմանափակուին քորիական թերակողգիով կամ այլ ճաւիղական ծովով, նոյնը կարելի չէ ըսել Իրանի մասին: Իրանի պարագային անոնք կ'ունենան տոմսի ձեւի ազդեցութիւն՝ ներքաշելով ամբողջ Մերձավոր Արեւելքը եւ մերձակայ տարածաշրջանները», ըսաւ Շահնագարեան:

Արամ Շահնագարեան անեցնուց կարելի էր այլ հանգամանք մըն ալ, որ կը վերաբերի երկու երկիրներու քաղաքական համակարգերուն նկատմամբ Սպիտակ տան մօտեցումին:

«Քորիական թերակողգիի իրադարձութիւններուն հետեւող փորձագետներուն կարծիքով, Սպիտակ տունը համակերպած է Զիւսիսային Զորիայի քաղաքական համակարգին հետ՝ գիտակցելով, որ յարաբերություններու կարգաւորման համար պէտք է բանակցին նոյնիւնքն Կիւմ Զեն Ընի եւ անոր կողմէն նշանակուած իշխող վերնախաւի միւս ներկայացուցիչներուն հետ: Մասնաւոր, որ ԱՄՆ-ի հետ յարաբերություններու կարգաւորումը կրնայ երիտասարդ առաջնորդին համար թէ՛ երկրին մէջ, թէ՛ անոր սահմաններէն դուրս յաւելելու վաւերականութիւնն ու հեղինակութիւնն ապահովել: Նոյնը կարելի չէ ըսել Իրանի պարագային: Նախ՝ Իրանի ղեկավարութեան չի հետաքրքրեր նման ոճով յաւելելու վաւերականութեան եւ հեղինակութեան ապահովումը, մասնաւոր, որ անոր կարիքն ալ

առանձնապէս զգալի չէ: Իսկ յետոյ՝ Սպիտակ տան մէջ կան գործիչներ, յատկապէս Թրամփի ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական Ճոն Պոլթընն ու պետական քարտուղար Մայք Փոմփեօն, որոնց հետահար նպատակը Իրանի վարչաձեւին փոփոխութիւնն է: Այս իրողութիւնը բնաւ չի վրիպիր ոչ Թեհրանի, ոչ ալ փորձագետներու եւ միջազգային հանրութեան ուշադրութենէն», յայտնեց ան:

Եզրափակելով Արամ Շահնագարեան յայտնեց, որ, իր կարծիքով, այս պահուն Իրան-ԱՄՆ յարաբերություններուն մէջ հիւսիսայինըրեական բեմադրութեան տարբերակը բացառուած է: «2020 թուականի ԱՄՆ նախագահական ընտրութիւններու ֆոնին, Իրանի մէջ ուշադրութեամբ կը հետեւին ԱՄՆ ներքաղաքական զարգացումներու ընթացքին, որոնք, ինչ խօսք, անմիջականօրէն կրնան ազդել Իրանի նկատմամբ Սպիտակ տան քաղաքականութեան վրայ: Թեհրան իր կարծի դիրքորոշումով կը փորձէ սահմանափակել նախագահ Թրամփի շարժման կարելիութիւնը՝ նախագահական ընտրութիւններուն ընդառաջ անոր համար կտրականապէս մեծցնելով Իրանի հետ առճակատման վտանգներն ու անոնց նախատեսելի հետեւանքները: Ու թեւ սխալած չենք ըլլար, եթէ յայտնենք, որ Թրամփի գործողութիւններուն մէջ մեծ է անկանխատեսելիութեան գործօնը, այդուհանդերձ, դժուար թէ ընտրություններու նախօրէին ան փորձէ ներքաշուիլ այնպիսի հակամարտութեան մը մէջ, որ կրնայ ճակատագրական ըլլալ իրեն համար: Այնպէս որ՝ դժուար թէ յառաջիկայ ամիսներուն Իրան-ԱՄՆ յարաբերություններուն մէջ կտրուկ շրջադարձի մը ականատեսը դառնանք: Բնականաբար, երբ նման նուրբ եւ զգայուն, այսպէս կոչուած, ճատրակի խաղին մէկ կողմը Իրանի փորձառու եւ ճկուն ղեկավարութիւնն է, իսկ միւս կողմը՝ Թրամփի պէս անկանխատեսելի խաղացողը, երբեք պէտք չէ մտահան ընել նաեւ ճեմսպրտեան ծախս խօսքը՝ «Never say never», - ըսաւ Շահնագարեան:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային Բարեն Եփփէ Ճեմարանը 2019-2020 դպրոցական տարեշրջանի համար կարիք ունի.-

- 1-Դաստիարակի
- 2-Յոգեբանական խորհրդատուի
- 3-Բնագիտութեան դասատուի
- 4-Գիտութեան դասատուի
- 5-Ֆրանսերէնի դասատուի
- 6-Համակարգիչի դասատուի
- 7-Մարզանքի ուսուցչուհիի:

Թեկնածուները պարտին ունենալ.-

- 1-Համալսարանական վկայական
- 2-Կրթական ձեռնհասութեան (Թասիլի թարգմանի) վկայական կամ երկու եւ անվի տարիներու փորձառութիւն:
- Ճեմարանը կարիք ունի նաեւ.-
- 1-Վարորդներու
- 2-Ծառայողական պաշտօնեաներու (տնտես հայրիկի եւ տնտես մայրիկի):

Փափաքողները կրնան դիմել Ազգային Բարեն Եփփէ Ճեմարանի տնօրէնութեան: Գեռաձայն՝ 4602500 - 0966 560111







## ՀԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ ԼՆ-ԳԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 2018-2019 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ

Աւարտական դասարաններու հանդէսները նաեւ հայերէն լեզուի եւ գրականութեան իւրայատուկ ու լրացուցիչ դասեր են, որոնց կը մասնակցին հայկական դպրոցի մը բոլոր բաղկացուցիչ տարրերը՝ աշակերտ, ծնողք, ուսուցիչ, տնօրէնութիւն եւ պատասխանատու մարմին:

7 Յուլիսին, «Գ. Նազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ՀԲԸ

այս վկայականը աւարտ չսեպել, այլ՝ սկիզբ:

14 Յուլիսին Նոյն սրահին մէջ տեղի ունեցաւ վարժարանիս երկրորդականի շրջանաւարտից վկա-

ԳԿ Կեդրոնականը, որ ուսման ու լոյսի փարոս մըն է, հայակերտման անփոխարինելի դարբնոց մը:

կան հսկողութեամբ:

Պաքալորիայի հանդէսէն ետք միութեանս կեդրոնի ճաշարանին մէջ տեղի ունեցաւ խորխոնակ, ներկայութեամբ շրջանաւարտներու ծնողներուն:

Այս տարուան շրջանաւարտները հպարտ են իրենց վարժարանով: Վստահ ենք, որ վարժա-



Միութեան ԼՆ-ԳԿ Կեդրոնական վարժարանի 2018-2019 տարեշրջանի միջնակարգի աւարտական դասարանի՝ պրովէի, վկայականաց բաշխման հանդիսութիւնը, «Վերնատուն» խորագիրով: Հանդէսը նուիրուած էր Հայ ժողովուրդի երկու հանճարեղ գաւակներուն՝ Կոմիտասի եւ Յովհաննէս Թումանեանի:

30 հայ պարման-պարմանուհիներ հայերէն լեզուի իրենց սիրուած ուսուցչուհի Տիկին Անի Յովակիմեան-Էօրտեքեանի գլխաւորութեամբ եւ երաժիշտ տիկին Մարգարիտ Խաչատուրեան-Պանտաքի, տեսուչներ Թալին Սիւլահեանի, Սիւզի Բէշիշեանի, Սագօ Աւագեանի եւ Մանուէլ Բէշիշեանի սիրայօժար օգնութեամբ ներկաներուն հրամցուցին ոգեշունչ գեղեցիկ գեղարուեստական յայտագիր մը, քաղուած Թումանեանի եւ Կոմիտասի գործերէն: Ներկաները հետաքրքրութեամբ եւ հաճոյքով հետեւեցան մօտաւորապէս մէկ ժամ տեւած այս յայտագիրին, որմէ ետք տեղի ունեցաւ հանդիսութեան երկրորդ՝ պաշտօնական բաժինը, որուն ընթացքին Միջնակարգի աւարտական դասարանի աշակերտները ստացան իրենց վկայականները, պարգեւատրուեցան 7-րդ, 8-րդ եւ 9-րդ դասարաններուն հայերէնի մէջ բարձր միջին ունեցող ինն աշակերտներ, պարգեւատրուեցան նաեւ 2017-2018 ուսումնական տարեշրջանի պետական քննութիւններուն բարձրագոյն գնահատանիշեր ապահոված երեք աշակերտներ:

Հուսկ բանքը արտասանեց վարժարանի տնօրէնուհի օրիորդ Գայիանէ Թիւմպալեան, որ աշակերտներուն յորդորեց ըլլալ արժանի գաւակները իրենց ծնողներուն ու

յականաց բաշխման հանդիսութիւնը, նուիրուած դպրոցի հիմնադրութեան 65-ամեակին: Հանդիսութեան ընթացքին 58-րդ հունձքն էր, որ կը քաղուէր արժանի հպարտութեամբ:

Օրիորդ Թամար Խաչատուրեան եւ պարոն Մարտիկ Տոլմաճեան պատրաստած էին յատուկ գրքոյկ մը, որուն մէջ 25 շրջանաւարտներ արձանագրած էին դպրոցին եւ ՀԲԸ Միութեան հանդէպ երախտագիտական ջերմ խօսքեր:

Շրջանաւարտները՝ պարով, երգով, ասմունքով, նուագով եւ թատերական պատկերով ներկայացուցին գեղարուեստական ճոխ յայտագիր մը, որուն պատրաստութեան սատարած էին վարժարանիս տեսուչներն ու տիկին Մարգարիտ Պանտաքը:

Հանդիսութեան պաշտօնական բաժինին մէջ շրջանաւարտները ստացան իրենց վկայականները, այս անգամ պարգեւատրուեցան երկրորդական բաժնի մէջ հայերէնի բարձրագոյն միջիններ ապահոված աշակերտներն ու շրջանաւարտները, ինչպէս նաեւ 2017-2018 տարեշրջանի պետական պաքալորիայի քննութիւններուն 97% եւ ւելի միջին ապահոված շրջանաւարտները:

Հուսկ բանքը արտասանեց տնօրէնուհին, որ շնորհակալութիւն յայտնելէ ետք ՀԲԸ Միութեան Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովին եւ Կրթական Յանձնախումբին, խօսքը ուղղելով շրջանաւարտներուն յորդորեց միշտ տեր կանգնիլ մայրենի լեզուին, դառնալ ինքնուրոյն անհատներ եւ միշտ ձգտիլ լաւագոյնին: Ան խնդրեց նաեւ միշտ յիշել իրենց սիրելի վարժարանը՝ ԼՆ-



Յիշեք, որ երկու հանդիսութիւններու գեղարուեստական յայտագրերը պատրաստուեցան վարժարանիս տնօրէնուհիին անմիջա-

րան ալ իրենցմով հպարտ պիտի ըլլայ, ինչպէս եղաւ Նախորդ 57 հունձքերու շրջանաւարտներով:


Թղթակից

### ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

ՍՕ Խաչի Ազգ. Պատասպարանը կարիքը ունի գիշերապահուհիի:

Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել ամէն օր ժամը 10:00-էն 4:00 հետեւեալ թիւին. - 4442022:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



فندق الوديان

www.alwedianhotel.com

مشنتى الحلو - كفرون

ԱԼ ՈՒԻՏԵԱՆ ՊԱՆԴՈԿ (Իլիաս Ռիատ Նասսար) Մաշթա ալ Գլու-Զաֆրուն

Շքեղ բնութիւն, ընտանեկան մթնոլորտ, մատչելի գիներ

Պատրաստակամութիւն կը յայտնենք ընդունելու սկաուտական եւ միութեանական խումբեր:

Յաւելեալ մանրամասնութեան համար հեռաձայնել՝ 043 581298 - 043 583559 - 0944533577 թիւերուն:

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ ԱՐՓԻՆԷ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ (Ծնեալ՝ ԹԱՇՃԵԱՆ)



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 21 Յուլիս 2019-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Հալեպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:

## ՄՏԱՄԱՐԶԱՆԲ



Պատրաստեց Մարինա Զիլբերշեան-Պողիկեան

### ԽԱՉԲԱՌ (ՄՆ 303)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1						■						
2							■					
3								■				
4		■		■		■				■		
5		■	■		■		■		■			
6							■					
7						■					■	
8		■		■						■		
9		■								■		
10			■					■				
11				■		■						
12							■					

#### Հորիզոնական

- 1- Խոտի, յարդի ամբարանոց: Ժանգոտած ամանները փայլեցնող նիւթ:
- 2- Սանձ: Հրաբուխէն դուրս վազող բոցավառ նիւթ:
- 3- Ոտքը ուժգին գետին գարնող: Հակառակ՝ համբոյր:
- 4- Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ պետական կրօնք դառնալու թուականը: Հակառակ՝ ծոթրին:
- 5- 103: Ցուցական դերանուն:
- 6- Գաղթող թռչուն: «Մռաւ լերան լանջին սեւ ամպեր պատեց» երգը Լուսինուած է իր իշատակին:
- 7- Անուշաբոյր բոյս: Անասունի կեր:
- 8- Հակառակ՝ 38: Հիւսող միջատ: Հակառակ՝ տառի մը անունը:
- 9- Նետ դնելու աման:
- 10- 4060: Սուղ:
- 11- Հակառակ՝ քաջ: Ողջոյն:
- 12- Աստուածային: Թաքուն պայթուցիկ:

#### Ուղղահայեաց

- 1- Հայերէն ամենամեծ մագաղաթեայ ձեռագիրը:
- 2- Ընթողիկանկելով մաքրագրել: Հակառակ՝ գրական ստեղծագործութիւն:
- 3- Հակառակ՝ արդի: Սարսափ: Անձնական դերանուն:
- 4- Խոշոր գիւղ: Կատար:
- 5- Հակառակ՝ 4503: Դատարկ: Տոպրակ:
- 6- Տարածքի միաւոր: Եւս: Աջակերտ:
- 7- Կերպաս հիւսող ասեղ: Ծէնքի բաժանում:
- 8- Բաղաձայն տառեր: Ոչ երկայն:
- 9- Եւս: Հիմա: Կրկնուած ձայնաւորներ:
- 10- Կշտացում: Համբաւ:
- 11- Առաջին կինը: Ձայնաւոր տառեր:
- 12- Խաչատուր Աւետիսեանի ստեղծագործութիւններէն:

### ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 302)

Տեղադրէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

			4					
6		9			1		4	3
4	5			9				8
		2		3			9	
		7		2		3		1
	4					5		
1				6			5	4
9	7		1			8		6
					5			

### ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 73)

Խաչատուր Աւետիսեանի ստեղծագործութիւնները ջնջելով գտէ՛ք պահուած բառը:

Պահուած բառը 10 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Աւետիսեանի երգերէն մէկը:

կ	ա	ծ	ա	ղ	ի	կ	ն	է	բ
ա	հ	ն	ա	հ	ի	մ	բ	ա	ճ
խ	ա	ս	ո	ն	ո	ւ	թ	ղ	է
ա	յ	ն	ի	ւ	ո	վ	է	ջ	բ
բ	ո	բ	ա	մ	բ	ւ	ի	ի	մ
ղ	ց	տ	խ	հ	ո	ջ	շ	կ	ա
ո	յ	ա	է	ն	ի	գ	ն	ի	կ
ւ	մ	ւ	ո	ս	ա	տ	շ	է	է
ա	բ	ի	ա	ղ	ա	ւ	ն	ի	բ
ծ	ա	ղ	կ	է	փ	ո	ւ	ն	ջ

«Անուշներ», «Հայոց Հովիկ», «Մախմուր Աղջիկ», «Իմ Անուշ Տաւիղ», «Կախարդուած Ծաղիկներ», «Ծաղկեփունջ», «Ծերմակ Աղանի», «Անահիտ», «Ասում Եւ Թէ»

## ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

### ԽԱՉԲԱՌ (ՄՆ 302)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		
1	բ	ա	ն	բ	է	բ	■	թ	ի	բ	ա	խ	
2	ա	կ	ա	ն	ա	կ	ի	ա	■	■	■	է	
3	բ	■	■	ա	ն	■	կ	■	■	ա	ա	ղ	
4	գ	ո	բ	գ	■	բ	■	լ	■	է	ա	կ	
5	է	ւ	■	ի	ա	ա	հ	ա	կ	■	■	ա	
6	ն	լ	■	■	ի	լ	ա	■	■	ա	ո	ա	ա
7	ա	ա	կ	■	■	■	■	■	■	■	■	■	■
8	ի	յ	■	է	ա	բ	■	■	■	կ	գ	ա	կ
9	ւ	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
10	ն	ի	գ	■	■	■	■	■	■	■	■	■	■
11	ի	մ	ա	ս	ա	ն	ւ	■	■	■	կ	է	բ
12	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■

### ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 301)

5	3	4	2	8	9	7	1	6
6	8	2	1	4	7	3	9	5
7	9	1	6	5	3	4	8	2
2	4	3	9	7	5	8	6	1
8	6	9	3	1	4	5	2	7
1	7	5	8	6	2	9	3	4
4	2	8	5	9	6	1	7	3
3	1	7	4	2	8	6	5	9
9	5	6	7	3	1	2	4	8

### ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 72)

Պահուած բառն է՝ «Հոգեհանգիստ»

### ՎԱՐՉԱՊԵՏ...

Սկիզբ՝ Էջ 3

«Ինչ կը վերաբերի Սահմանադրական դատարանին շուրջ ստեղծուած իրավիճակին առնչուող գեղուցումին մէջ տեղ գտած անդրադարձին, կ'ուզենք տեղեկացնել, որ գոր-

ծաղիկ իշխանութիւնը ցարդ որեւէ պաշտօնական դիրքորոշում չէ արտայայտած:

«Յայտնենք նաեւ, որ հարցին շուրջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան յառաջիկայ օրերուն հանդէս պիտի գայ յայտարարութեամբ»:

## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



### ԽՈՅ

Այս շաբաթ ընտանեկան հաճելի հանդիպումներ պիտի ունենաք: Մերթ ընդ մերթ կազմակերպեցեք նման հանդիպումներ՝ դուրս գալու գործի ճնշիչ մթնոլորտէն:



### ՑՈՒԼ

Հետեւեցեք մարգանքի: Հանգիստի եւ գթասանքի ժամանակ տրամադրեցեք: Նիւթական ձեր վիճակը բարելավելու համար տևտեսող եղեք:



### ԵՐԿՈՒՐԵԱԿ

Այս շաբաթ ձեր կուտակուած աշխատանքները ներկայացնեմք պիտի մատեն ձեզ: Ձեր գործի ընթացքը պիտի դանդաղի: Օրը օրին կարգաւորեցեք ձեր գործերը:



### ԽԵՑԳԵՏԻՆ

Չգացումները ջերմութեամբ կը լեցունեն ձեր կեանքը: Ձեր սիրելիին սեր խոստովանելու մի՛ վարանիք:



### ԱՌԻԾ

Ընկերային թէ սիրային ձեր յարաբերութիւններուն մէջ փորձեցեք պահել ձեր անհատականութիւնը յատկանշող առաւելութիւնները:



### ԿՈՅ

Այս շաբաթ նիւթական շահ մը պիտի ապահովէ: Ձեր գործերը յաջողութեամբ պիտի պսակուին, եթէ կարենաք դասաւորել ձեր աշխատանքն ու յարաբերութիւնները:



### ԿԵՒՈՋ

Մանրամասնութիւնները սերտեցեք նախքան որոշում տալը: Օրէնքները յարգեցեք: Պետք է բժախնդրութեամբ կատարեք ձեր գործերը, որպէսզի յաջողութիւն ունենաք: Փոփոխական տրամադրութիւն մը պիտի ունենաք այս շրջանին:



### ԿԱՐԻՃ

Որքան ալ նեղացած ու անտրամադիր ըլլաք, թշնամական կեցուածք մի՛ որդեգրեք ձեր գործընկերներուն հանդէպ: Նիւթական անցողիկ դժուարութիւն մը պիտի ունենաք, մի՛ յուսահատիք:



### ԱՐԵՂՆԱՌՐ

Հեռու մնացեք աշխատանքային վիճաբանութիւններէ: Ձեր ջիղերը յոգնած են, եւ հանգիստի պետք ունիք: Խոր կարօտ կը գգաք ձեր հայրական տան ու հայրենիքին:



### ԱՅԾԵՂԶԻՐ

Ձեր ամբողջ կարողութեամբ պիտի պաշտպանէք ձեր դատը: Յամառութիւն մի՛ ընէք, լսեցեք նաեւ ձեր շուրջիներուն կարծիքը եւ տեսակետը՝ ձեզ մտահոգող հարցին վերաբերեալ:



### ՋՐՈՍ

Դուք պիտի ապահովէք ձեր կեանքին երջանկութիւնը: Այլոց մեծ յոյսեր մի՛ կապէք:



### ՁՈՒԿ

Հեռու մնացեք աղմկոտ շրջանակներէ: Հանգիստի ժամանակ տրամադրեցեք: Մի՛ ուշացնէք ձեր գործերը: Ձեր տրամադրութիւնը պիտի բարեփոխուի:



## ՏԱՆՏԻԿՆՈՋ ՅԱՏՈՒԿ ՀՆԱՐՔՆԵՐ




Եթէ ձեր տան ծածկոցներուն վրայ յայտնուին խմիչքի կամ սուրճի հետքեր, օգտագործեցեք հետեւեալ հնարքները.

1. Մի՛ փորձեք կտորէ սրբիչներով մաքրել հետքերը: Այդ մէկը կ'ընդլայնէ աղտին մակերեսը: Աւելի լաւ է սպունգով եւ մաքրութեան յատուկ հեղուկներով պարզապէս թրջել այդ հատուածը: Ապա սափրուելու համար նախատեսուած օճառը տեղադրել անոր վրայ ու ձգել երեք վայրկեան, յետոյ թաց եւ մաքուր սպունգով մաքրել այդ բաժինը:
2. Ծամոնը գորգէն կամ այլ ծածկոցի վրայէն հանելու համար օգտագործեցեք սառը: Սառով շփեցեք գայն, քանի մը վայրկեան վերջ ծամոնը կը քարանայ եւ դիւրութեամբ կը վերանայ կերպասին կամ գորգին վրայէն:
4. Մոմին հետքերը մաքրելու համար օգտագործեցեք ճերմակ, բարակ կտոր մը: Անով ծածկեցեք աղտոտած բաժինը եւ արդուկեցեք: Քանի մը վայրկեան անց նոյն գործողութիւնը կրկնեցեք՝ այս անգամ թուղթ տեղադրելով մոմի հետքին վրայ:
5. Արեան հետքերը մաքրելու համար կերպասը անմիջապէս լուացեք տաք ջուրով, իսկ արիւնը չորցած ըլլալու պարագային օգտագործեցեք ակռայի դեղը: Նախ դեղը տարածեցեք արեան հետքին վրայ, քանի մը վայրկեան վերջ կերպասը լուացեք պաղ ջուրով:
6. Արծաթեայ գարդեղէններն ու սպասները փայլեցնելու համար ալ կարելի է օգտագործել ակռայի դեղը: Մաքուր լաթով մը գարդեղէնները լաւ շփելէ ետք, երկրորդ լաթով մը ձերբազատեցեք դեղին մնացորդներէն:
7. Եթէ ձեր հագուստին կամ որեւէ ծածկոցի մը վրայ սուրճը թափի, նախ սրունգով մը փորձեցեք չորցնել կտորը: Ապա 1 ճաշի դգալ լուացքի հեղուկը, 1 ճաշի դգալ քացախը 2 բաժակ տաք ջուրին հետ խառնեցեք ու անով մաքրեցեք սուրճին հետքը:
8. Անխորժ հոտերէն ձերբազատելու համար օգտագործեցեք սոտան: Կերպասին վրայ քանի մը դգալ սոտա լեցուցեք, ապա քանի մը ժամ վերջ փոշեկուրով հեռացուցեք գայն: Այսպիսով անխորժ հոտը կ'անհետանայ:
9. Արդուկին յատակը մաքրելու համար օգտագործեցեք խոնաւ, մաքուր լաթ մը, թաթխեցեք աղի մէջ եւ անով իսկ թէթեւակիօրէն շփեցեք արդուկին յատակը: Արդուկին յատակը կարելի է մաքրել նաեւ կիտրոնով:

## ԻՄԱՍՏՈՒՆ ԿՆՈՋ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

1-Իմաստուն կինը չ'ապրիր իր շրջապատի կարծիքին տուրք տալու համար: Այս մէկը չի նշանակեր, որ ան կ'արհամարհէ իր միջավայրին կարծիքը. ան պարզապէս իր կեանքը չի կարգաւորեր միայն իր շրջապատը գոհացնելու համար: Իմաստուն կինը կը ճշդէ իր կեանքին նպատակները եւ կ'աշխատի ու կը մաքառի անոնց իրականացման համար, առանց տուրք տալու իր շրջապատին:



2-Ան շատ լաւ գիտէ, որ կարելի չէ բոլորին հաճելի թուիլ: Ինքնաբաւ կինը կ'աշխատի ինքզինքն արգացնել եւ գեղեցկացնել, ոչ թէ այլոց հաւանութեան արժանանալու համար: Ան քաջ գիտէ իր թերութիւնները եւ աշխատանք կը տանի սրբագրելու գանոնք: Վերջապէս ո՞վ անթերի է:

3-Իմաստուն կինը չի տրտնջար, ոչ ալ կ'ուզէ այն տպաւորութիւնը թողուլ, թէ գիշեր-ցերեկ կ'աշխատի գումար վաստակելու, իր ընտանիքին բեռը մեղմացնելու համար, կամ անընդհատ կը լուայ, կ'արդուկէ, գաւակները կը խնամէ եւ այլն: Ան իր աշխատանքը լրումին կը հասցնէ առանց տրտնջալու, միշտ պահելով իր դեմքին ժպիտը, նոյնիսկ ծանրաբեռնուած ըլլալու պարագային:

4-Իմաստուն կինը կ'ապրիր իր ներկան, օգտուելով անոր ընձեռած բոլոր առաւելութիւններէ: Ան չ'օգտագործեր իր տարիքին պատրուակը վախերը կամ ապրումները ծածկելու համար: Ան քաջ գիտէ, որ իւրաքանչիւր տարիք ունի իր գեղեցկութիւնը, հմայքը եւ պետք է ապրիլ ու գգալ իւրաքանչիւր տարիքի առաւելութիւնը:





Ռաֆֆի Սիլահեան

## ՏԵՂԱԿԱՆ

### ՊԵՏԻԿ ՄԱՐՏԵՐԵՃԵԱՆ ՄԻԱՅԱՄ ՍՈՒՐԻՈՅ ՄԻՆՉԵՐ 17 ՏԱՐԵԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՍԵԹԻ ՀԱՄԱԶԿԱՄԱՆԻ

ՀՄԸՄ-ի պասքեթի տղոց խումբի խաղացող Պետիկ Մարտերեճեան, Կիրակի 14 Յուլիսին Սուրիոյ երիտասարդական պասքեթի հաւաքակազմին հետ մեկնեցաւ Իրան, 15-21 Յուլիս 2019-ին Թեհրանի մէջ իր մասնակցութիւնը բերելու բարեկամական մրցաշարքին:

Աւելցնենք, որ Պետիկ Մահսերեճեան կը նկատուի Սուրիոյ երիտասարդ լաւագոյն խաղացողներէն մէկը: Ան վերջին տարիներուն կրցաւ ներկայանալ որպէս բարձրորակ մարզիկ: ՀՄԸՄ-ի խումբէն հրաւեր ստացած էր նաեւ Յովիկ Զըլզին, սակայն անոր առողջական վիճակը պատճառ դարձաւ, որ զանց առնուի հաւաքակազմէն:



## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ԱԶԱՐՏԻ ՄԱՐԶԱՇԱԿԻԿԻՆ ԹԻՐԸ ՅՍՏԱԿԱՅԱՄ

Սպանիոյ թագաւորական ակումբի՝ ՌԵԱՄ Մատրիտի նորեկ խաղացող Իտէն Ազարտ ընտրեց 23 թուականի մարզաշապիկը, որով պիտի մասնակցի ախոյեանութեան մրցումներուն:




Ըստ Ազարտի, ան այս թիւը ընտրած է, որովհետեւ կը կը հետեւի ամերիկեան պասքեթի NBA-ի մրցումներուն եւ կը քաջալերէ Մայքլ Ժորտընն ու Լըպրոն Ճէյմսը, որոնք նոյնպէս կը կրէին թիւ 23 մարզաշապիկը:

Աւելցնենք, որ սպանական ակումբին մէջ թիւ 23 տարագով խաղացած է Անձիլոյ հաւաքակազմի խաղացող Տէյվիտ Պեքեամ: Պէլճիքացի խաղացողը Չելսիի մէջ կը հագնէր թիւ 10 կրող տարագը, որ ներկայիս մատրիտեան կազմին մէջ կը պատկանի Լուքա Մոտրիչին:

### ԶԻՏԱՆ ԽՈՒՄԱԸ ԼԵՆԻՎ ՍՊԱՆԻԱ ՎԵՐԱՊԱՐԶԱՄ

Սպանիոյ մայրաքաղաք ՌԵԱՄ Մատրիտ ակումբի վարչական կազմը հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ խումբի ֆրանսացի մարզիչ Չիւրտտին Չիտանը լքած է Բանատայի մէջ տեղի ունեցող կազմին ուսումնամարզական հաւաքը եւ վերադարձած Սպանիա, ուր յանկարծամահ եղած է իր եղբայրը: Մինչ այդ, կազմին մարզումներուն աշխատանքը վստահուած է Չիտանի օգնականին՝ Տէյվիտ Պիթունիին մինչեւ անոր վերադարձը:



### ՈՒՄՊԸԼՏԸՆ-2019. ԾՈՔՈՎԻԶ ՅԱՂԹԵՏ ՖԵՏԵՐԸՐԻՆ ԵՒ ՊԱՅՊԱՆԵՏ ՏԻՏՐՈՒՆ



Աշխարհի արիւստավարժ թենիս խաղացողներու աղիւսակին առաջին դիրքը գրաւող Նովակ Ծոքովիչ իր մարզական կեանքին մէջ 5-րդ անգամ ըլլալով յաջողեցաւ ձեռք ձգել Ուիմպլտընի բաժակը, պահպանելով 2018-ին իր նուաճած տիտղոսը: Եզրափակիչ խաղին, Ծոքովիչ 5 փուլերուն 7-6 (7-5), 1-6, 7-6 (7-4), 4-6, 12-12 (7-3) հաշիւով պարտութեան մատ-

նեց մրցաշարքի երկրորդ մարզիկը՝ գուիցերիացի Ռոճըր Ֆետերըրը: Հանդիպումը տեւեց 4 ժամ 55 վայրկեան եւ եղաւ Ուիմպլտընի մրցաշարքի պատմութեան ամենէն երկար եզրափակիչը:

Յիշենք, որ Ծոքովիչ Ուիմպլտընի բաժակակիր դարձած է 4 անգամ՝ 2011, 2014, 2015 եւ 2018 թուականներուն: 2014, 2015 թուականներու եզրափակիչներուն, ան երկու անգամ յաղթած էր Ֆետերերին:

### ՊԱՐՍԵԼՈՆԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ԻՐ ՆՈՐ ԽԱՂԱՑՈՐԸ՝ ԲՐԻՉՄԸՆԸ

Կիրակի օր, Սպանիոյ ախոյեան Պարսելոնան ներկայացուց խումբի նորեկ ֆրանսացի յարձակող Անթուան Բրիչմընը, որ քաթալոնիական ակումբին միացաւ մեկնելով Աթլէթիքո Մատրիտէն: Ֆութպոլիստը ակումբի նախագահ Խոսէ Փարտոմէուի հետ հանդիպումէն ետք լրագրողներուն ներկայացաւ իր նոր մարզաշապիկով, որ կը կրէ 17 թիւը:



Յիշենքնք, որ քաթալոնիական ակումբը Բրիչմընը ձեռք բերաւ փոխան 120 միլիոն եւրոյի: Ֆութպոլիստը Պարսելոնայի հետ ստորագրեց հինգ տարուան պայմանագրութիւն մը: Պայմանագրութեան հրաժարագինն է՝ 800 միլիոն եւրո:

### ՀԵՆՐԻԿ ՄԻՒԹԱՐԵԱՆ ԱՐՍԵՆԱԼԻ ՀԵՏ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ ՄԵԿՆԵՑԱՄ

Լոնտոնի Արսենալը, որուն կազմին հետ հանդէս կու գայ Հայաստանի հաւաքակազմի աւագ Հենրիկ Միութարեան, նախապատրաստուելով յառաջիկայ տարուան ախոյեանութեան, ուսումնամարզական հաւաքի համար մեկնեցաւ Ամերիկայի Լոս Անճելոս նահանգ:



Ըստ ակումբի պաշտօնական կայքին, Միացեալ Նահանգներ մեկնեցաւ 29 ֆութպոլիստ: Ամերիկա շրջապայութեան ընթացքին Արսենալ պիտի մասնակցի բարեկամական չորս մրցումի: 15 Յուլիսին Դենվերիի մէջ արսենալցիները հանդիպեցան Կոլորադո Ռապիտի հետ, որմէ երեք օր ետք, Լոս Անճելոսի մէջ, անոնք պիտի մրցին Գերմանիոյ ախոյեան Պայերն Միւնխի դէմ: Լոնտոնեան ակումբի յաջորդ մրցակիցները պիտի դառնան իտալական Ֆիորենտինան: 24 Յուլիսին Արսենալ ուսումնամարզական հաւաքը կ'աւարտէ հանդիպելով Սպանիոյ ՌԵԱՄ Մատրիտի հետ:

ԵՐԱՌԵՐԹԻ	ԵՐԵՐԵՐԹԻ	ՉՈՐԵՐԵՐԹԻ	ՀԻՆԱՇԵՐԹԻ	ՈՒՐԵԱՐ	ՇՐՔԱՐ	ԿԻՐԱԿԻ
22/7	23/7	24/7	25/7	26/7	27/7	28/7
22° 39°	22° 39°	21° 38°	20° 37°	20° 37°	21° 36°	22° 37°

## ԱՐԱՅԻՆ ՔԱՐԵՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍ ՍԵՐՈՒՐ» ԸՐԶԱՆԱԽՐՈՍ ՀՈՒՆՁՔԻՆ ՀԱՆՐԱԸ

Շաբաթ, 13 Յուլիս 2019-ին տեղի ունեցավ ԱՔԵ ՃԵՄԱՐԱՆԻ 2018-2019 տարեշրջանի 12-րդ կարգի

գր: Գեղարուեստական յայտագիրը շարունակուեցավ խումբ մը շրջանաւարտներու եղիչէ Զարեանցի Կոմի-



ամավերջի հանդէսը: Այս սերունդը կոչուեցաւ մեծատաղանդ Կոմիտաս վարդապետի անունով: Շրջանա-

տասին նուիրուած ձօնին ասմունքով: Շրջանաւարտներ Յովիկ Պարտումեան եւ Կասիա Պաղտիկեան երեկոն գեղեցկացուցին Կոմիտասեան հորովելին հմայիչ երգեցողութեամբ, որմէ ետք այլ շրջանաւարտներ ասմունքեցին Կոստան Զարեանի Կոմիտաս վարդապետին աճիւնները Զայաստան փոխադրուելուն նուիրուած բանաստեղծութիւնը:



արտները ուխտեցին ըլլալ Կոմիտաս վարդապետի ժառանգութեան պահպան երդուեալ գիւնդներ:

Յանդիսատեսին հրաձգուեցաւ նաեւ արաբերէն ասմունք՝ «Գիտութեան Ուժը» վերնագիրով: Կոմիտասի

Յանդէսի բացումը կատարուեցաւ Սուրիոյ եւ Զայաստանի հանրապետութիւններու գոյգ քայլերգներով: Զայերէն բացման խօսք արտասանեց շրջանաւարտ Մարալ Ղազարեան յայտնելով, որ ճեմարանի ազգայնաշունչ յարկին տակ սերունդները կը սորվին հայերէն խօսիլ, հայօրէն մտածել, հայերէն արտայայտուիլ:



Արաբերէն բացման խօսքով հանդէս եկաւ Նանար Արթինեան, շեշտելով որ շրջանաւարտները պիտի քաղեն յաջողութեան պտուղները եւ կարելոր քայլ պիտի առնեն դէպի լուսաւոր ապագայ:

«Յով Առեք»ով երեկոյին հայկական թարմ շունչ հաղորդեց շրջանաւարտ Մարիա Զիչեան: Զայերէն ուղերձով

Ապա շրջանաւարտ Ալեքսի Պօղոսեան ներկայացուց Կոմիտաս վարդապետն ու նորահաս սերունդի պարտաւորութիւնները այդ մեծ տաղանդին ժառանգութեան նկատմամբ: Այնուհետեւ շրջանաւարտ-



ներու երգչախումբը հանդիսատեսին մատուցեց Կոմիտասեան երգերէն «Երեւան Բաղ Եմ Առեյ», «Առնեմ Երթամ Իմ Եարը», «Յոյ Նագան Իմ Եարը», «Եսօր Ուրբաթ Է», «Յաբբան», «Յոռոմ-Յոռոմ» եւ արաբերէն հայրենասիրական «Նահնու Նուր» եր-

հանդէս եկաւ շրջանաւարտ Կիթառ Ալընեան՝ խոստանալով, որ ուր ալ գտնուիք ճեմարանը մեր հոգիին մէջ պիտի ապրի, ուր ալ գտնուիք միշտ պիտի շարժիք եւ գործեք ճեմարանի դաստիարակութեան թելադրանքով: Արաբերէն ուղերձ արտասանեց շրջանաւարտ Մելիք Տրմաշ՝ դիտել տալով որ ճեմարանականներ բոլոր ծիրերուն մէջ կը յատկանշուին իրենց դաստիարակութեամբ եւ նկարագրային իւրայատկութեամբ:

Այնուհետեւ վարժարանիս պետական տնօրէնուհի Այշա Զապա-  
**Վեհան Պարտումեան**  
Շաբ.՝ էջ 10 >

## ԱՐԱՅԻՆ ՔԱՐԵՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ԸՐԶԱՆԱԽՐՈՍ ՀՈՒՆՁՔԻՆ ՀԱՆՐԱԸ

Ուրբաթ, 12 Յուլիսի երեկոյեան ժամը 8:00-ին, Ազգ. Զարեն Եփփէ Ճեմարանի շրջակայքը գեղեցիկ տեսք մը ունէր... Բեմը յարգարուած էր նորբաճաշակ պատաստներով ու ծաղիկներով, բակը մաքուր, փայլփլուն ու հարիւրաւոր աթոռներով պատրաստ հիւրընկալելու ծնողներն ու պաշտօնական հիւրերը: Խնամակա-

րութիւնը հրաւիրեց բեմին վրայ պարզուած գեղեցիկ այն պատկերին՝ միջնակարգի մեր դասընկերներու գունագեղ փունջին, որ ուրախութիւն կը սփռէ իր չորսդին, հպարտութիւն կը ներշնչէ ծնողներուն, վարժարանի տնօրէնութեան, Խնամակալութեան, ուսուցչական ու վարչական կազմերուն: Ան իր սերունդին անու-



լութիւնն ու տնօրէնութիւնը եռուզեռի մը մէջ ամէն բան կատարեալ հրամցնելու ճիգի մը մէջ էին: Ազգ. Զարեն Եփփէ Ճեմարանի միջնակարգի 2018-2019-ի ուսումնական տարեշրջանի շրջանաւարտ հունձքին ակարտական հանդէսն էր, հովանաւորութեամբ Բերիոյ Զայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գեղը. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, կազմակերպութեամբ ճեմարանի Խնամակալութեան եւ Տնօրէնութեան:

Նով խոստացաւ շնաստիութեամբ շարունակել ուսման դժուար, բայց արդիւնաւետ ճամբան:



59 խոստմալից շրջանաւարտներ բեմ բարձրացաւ յայտարարելու իրենց ուսումնական կեանքի միջնակարգ փուլին ակարտը:

Արաբերէն ուղերձը արտասանեց Աբրահամ Ալընեան եւ ըսաւ. «Ճեմարանը սերունդ մը եւս հասցուց միջնակարգի ակարտին, անոր մէջ կրթադաստիարակչական առողջ հիմք մը ամրապնդելով: Մեր սիրելի վարժարանի յարկին տակ մեծաթիւ սերունդներ հասակ առին ու կերտուեցան՝ դառնալով գիտնականներ, կրթական մշակներ, մտաւորականներ, ճարտարապետներ ու բժիշկներ, բարձր պահելով ճեմարանի անուընդ ամէն տեղ ու ամէն միջավայրի մէջ»:



ամեայ յոբելեանը: Զանդէս եկաւ աշակերտական երգչախումբը, գեղարուեստական ղեկավարութեամբ Ռուզան Պարտումեանի, իսկ հայերէն քերթուածներով եւ մէքերուած խօսքերով, միջնակարգի շրջանաւարտները ներկայացուցին օրուան խորհուրդն ու հայ լեզուին եւ հայկական վարժարանին դերը պարզաբանող ընտիր կտորներ:

Յայերէն բացման խօսքով Սելա Պազարպաշեան ըսաւ. «Միջնակարգի եռամեայ մեր աշխատանքը հասած է իր ակարտին: Այդ աշխատանքին պտուղներն պատահիկներ պիտի համտեսենք այսօր, միասնաբար, գեղարուեստական համեստ յայտագիրով մեր երախտագիտութիւնը յայտնելու ճեմարանին, ուսուցիչներուն եւ ծնողներուն»:

Արաբերէն բացման խօսքով Աննա Զալաքեան ներկայներուն ուշադ-

**Անի Պողիկեան**  
Շաբ.՝ էջ 9 >